Ազգ

Azg armenian daily

2 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1999 ՀԻՆԳՇԱԲԹԻ 205 (1951)

Բաքվում նոր ծրագրեր ու գաղափարներ են ակնկալում Մինսկի խմբի համանախագահներից

ԲԱՔՈՒ, 1 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ. Ղարաբաղյան հակամարտության կարգավորման ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահների դեկտեմբերին տարածաշրջան նախատեսվող այցը Բաքվում դիտվում է որպես ԵԱՀԿ-ի Ստամբուլի գագաթաժողովից հետո նրա խաղաղարար գործունեության ակտիվացում: Ինչպես չորեքշաբթի օրը «Փրայմ նյուսի» թղթակցին հաղորդել են Ադրբեջանի արտգործնախարարությունում, Մինսկի խմբի համանախագահները բերելու են նոր պլաններ ու գաղափարներ: Դա կլինի ղարաբաղյան հակամարտության կարգավորման միջազգային միջնորդների առաջին այցը այն բանից հետո, երբ Բաքուն մերժեց «ընդհանուր պետություն» ստեղծելու գաղափարը, որի կազմում մտնելու էին Ադրբեջանը եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: Մեկնաբանելով Մինսկի խմբի համանախագահների տարածաշրջան ծեռնարկելիք այցի մասին հաղորդումը, Ադրբեջանի արտգործնախարար Վիլայաթ Գուլիեւը լրագրողներին հիշեցրել է երկրի նախագահ Հեյդար Ալիեւի դիրքորոշումը, որը ԵԱՀԿ Ստամբուլի գագաթաժողովում հայտարարել էր, որ «Ադրբեջանի եւ Հայաստանի նախագահների ուղղակի երկխոսությունը չի նշանակում միջազգային միջնորդների հեռացում հաշտության գործընթացից»:

ՄԻՋՊԵՏԱԿԱՆ

Պետր Ստոյանով. «Բուլղարիան Հայաստանի համար Արեւմտյան Եվրոպայի դարպասն է»

ԱՆՈՒՇ ԲԱԲԱՅԱՆ

Բուլղարիայի նախագահ Պետր Ստոյանովը երեկ երկօրյա այցով ժամանեց Երեւան: Նախագահին ուղեկցում էր պատկառելի պատվիրակություն, որ մասնավորապես ընդգրկված էին տրանսպորտի նախարար Վիլիելմ Կրառան ու մի շարք բարձրաստիճան պաշտոնյաներ, բուլղարահայ ակնառու անձինք, գործարարներ ու լրագրողներ: Պատվիրակության կազմում Երեւան ժամանեց նաեւ Բուլղարիայում ՀՀ գործերի ժամանակավոր հավատարմատար, հայազգի գրող ու հասարակական գործիչ Սեւդա Սեւանը: Պատվիրակությանը դիմավորեցին նախագահ Ռոբերտ Քոչարյանը, արտգործնախարար Վարդան Օսկանյանը, այլ նախարարներ, գործարարների եւ արդյունաբերողների միության նախագահ Արամ Վարդանյանը եւ այլք:

ԱՐԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Նախօրեն պրն Ստոյանովի՝ հայաստանյան այցելության օրակարգին անցնելը հիշեցնենք, որ Բուլղարիայի նախագահն այսօր պաշտոնական այցով մեկնելու է Բաքու, ուր, ըստ նախնական պայմանավորվածության, Ադրբեջանի կառավարության հետ կննարկի երկկողմ հարաբերությունների եւ տնտեսական կապերի խորացմանն ուղղված ծրագրեր, այդ թվում ադրբեջանական նավթը Բուլղարիայի տարածքով Եվրոպա փոխադրելու պայմանները: Ինչ վերաբերում է պրն Ստոյանովի հայաստանյան երկօրյակին, ապա օրակարգը, գործնական հանդիպումներից բացի, ավելի շատ հագեցած էր այցելություններով տեսարժան վայրեր:

Տես էջ 2

ՄԱՅՐ ԱԹՈՌ

Նոր նշանակումներ Հայ առաքելական եկեղեցու թեմերում եւ Սբ. Էջմիածնում

Նոյեմբերի 30-ին, Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի նախագահությամբ, տեղի ունեցավ Գերագույն հոգեւոր խորհրդի նիստ, որի ընթացքում Նորին Սրբությունը հրապարակեց հայրապետական տնօրինությունները Հայաստանյայց Առաքելական եկեղեցու թեմերում եւ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում կատարված փոփոխությունների եւ նոր նշանակումների մասին:

Հայրապետական բարձր տնօրինությամբ.

1. Գերշ. Տ. Ներսես արք. Պողարյանը նշանակվել է Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի հրատարակչական մարմնի պատասխանատու՝ ազատվելով Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի դիվանապետի պարտականություններից:

2. Գերշ. Տ. Եղնիկ եպս. Պետրոսյանը նշանակվել է Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու՝ ազատվելով Հարավային Ռուսաստանի թեմի առաջնորդի պարտականություններից:

3. Գերշ. Տ. Նավասարդ եպս. Կոնյանը նշանակվել է Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ՝ ազատվելով Արագածոտնի թեմի առաջնորդի պարտականություններից:

4. Հոգշ. Տ. Փառեն ծ. վրդ. Ավետիքյանը նշանակվել է Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի թանգարանների պատասխանատու՝ ազատվելով Շիրակի թեմի առաջնորդական տեղապահի պաշտոնից:

5. Հոգշ. Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը նշանակվել է Շիրակի թեմի առաջնորդական տեղապահ՝ ազատվելով Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում իր նախկին պարտականություններից:

6. Հոգշ. Տ. Վազգեն վրդ. Միրզախանյանը նշանակվել է Արագածոտնի թեմի առաջնորդական տեղապահ՝ ազատվելով Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի քրիստոնեական դաստիարակության եւ քարոզչության կենտրոնի վարիչ-տնօրենի պաշտոնից:

7. Հոգշ. Տ. Մովսես վրդ. Մովսիսյանը նշանակվել է Հարավային Ռուսաստանի թեմի առաջնորդական տեղապահ՝ ազատվելով Ս. Հռիփսիմե վանքի վանահայրի պարտականություններից:

Հայրապետական մեկ այլ հրամանով Արարատյան Հայրապետական թեմի Սեւանի Վազգենյան դպրանոցը եւ Երեւանում գործող Հայորդյաց տներն անցնում են Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի հովանավորության եւ ենթակայության տակ: Հայորդյաց տների հոգեւոր տեսուչ է նշանակվել հոգշ. Տ. Թորգոմ աբեղա Տոնիկյանը: Վազգենյան դպրանոցի տեսուչի պաշտոնը կարունակի վարել արժանապատիվ Տ. Մինաս քհն. Մարտիրոսյանը:

ՍՍՍԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ռուբեն Միրզախանյան. Ստամբուլը Լիսաբոնի հետ համեմատողները մեղք են գործում

ԵՐԵՎԱՆ, 1 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ. ՀՈԱԿ-ը Ստամբուլի գագաթաժողովի վերաբերյալ իր տեսակետն արտահայտել է եւ դրական է գնահատել Հայաստանի դիվանագիտական գործունեությունը նախքան Ստամբուլը եւ գագաթաժողովի ընթացքում, որի հետեւանքը եղան այս հանգրվանում մեզ բավարարող արդյունքները, ասաց Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցության հանրապետական վարչության ատենապետ Ռուբեն Միրզախանյանը: «Ինչ վերաբերում է որոշ քաղաքական մարդկանց եւ անգամ առանձին կուսակցությունների գնահատականներին, որոնք նույնիսկ փորձ են կատարում Ստամբուլը համեմատության մեջ դնել Լիսաբոնի հետ, ապա վերջիններս մեղք են գործում թե պատմության, թե սեփական ժողովրդի առջեւ, քանզի փորձում են մոլորության մատնել մեր ազգին», ընդգծեց նա:

Մեկնաբանելով այն փաստը, որ ՀՀՇ կազմակերպության մի խումբ նախկին անդամներ եւ «Արմաս» կազմակերպությունը ԵԱՀԿ Ստամբուլի գագաթաժողովի արդյունքների վերաբերյալ բացասական որակումներով հանդես եկան մամուլում եւ հանրության առջեւ, որն Միրզախանյանը ավելացրեց նաեւ, թե նման ակտիվությունը բացատրվում է ընդամենը մեկ հանգամանքով. «Դա ոչ այլ ինչ է, քան տխուր մի փորձ քրեական, կիսաքրեական մի տարրի ներկայանալու հասարակությանը քաղաքական դիմակով, բայց թե ով՝ ով է, հանրությանը վաղուց է հայտնի»:

2 քահանաներ կարգալույծ արվեցին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Ամենայն Հայոց Գարեգին Բ կաթողիկոսի բարձր տնօրինությամբ Հայ Առաքելական եկեղեցու երկու քահանաներ՝ Տ. Հակոբ քհն. Պետրոսյանը եւ Տ. Գրիգոր քհն. Ավետիսյանը դեկտեմբերի 1-ից կարգալույծ են հռչակված:

Հայրապետական վճիռը կայացվել է, նկատի առնելով, որ վերոհիշյալ երկու քահանաները լքել են իրենց վստահված հոտը եւ հակառակ եղած հորդորներին ու թելադրանքներին, շարունակում են իրենց բողոքի ցույցը՝ դրսեւորելով անհնազանդության ոգի եւ հայ հոգեւորականին անհարիր վարք: Նկատի է առնված նաեւ սույն թվականի հոկտեմբերի 22-ի Գերագույն Հոգեւոր Խորհրդի ընդլայնված նիստի որոշումը՝ Տ. Հակոբ քհն. Պետրոսյանին եւ Տ. Գրիգոր քհն. Ավետիսյանին կարգալույծ անելու մասին:

Կարգալույծ արված քահանաներն այլեւս դասվում են աշխարհականների շարքը եւ կկոչվեն իրենց աշխարհիկ անուններով՝ Աշոտ Պետրոսյան եւ Արծրուն Ավետիսյան:

ՍՍՍԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ելցինի հիվանդությունը այլեւս չի հետաքրքրում ամերիկացիներին

ՆՅՈՒ ՅՈՐՔ, 1 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՍՆՍՐՔ. Ժողովրդավարացման գործընթացը Ռուսաստանում էլ ավելի կայուն է դառնում, այդ պատճառով էլ ամերիկյան պաշտոնական անձինք արդեն լուրջ անհանգստություն չեն արտահայտում ՌԴ նախագահ Բորիս Ելցինի հիվանդության վերաբերյալ հաղորդվող նոր տեղեկությունների առնչությամբ, գրում է New York Times-ը: Իհարկե, Կենտրոնական հետախուզական վարչության գործակալներն ուշադրությամբ հետեւում են ՌԴ նախագահի առողջական վիճակին ընթացիկ տարվա սկզբից, սակայն ԱՄՆ նախագահի վարչակազմի ներկայացուցիչներն ընդունում են, որ այժմ անհրաժեշտություն չկա արտաքին հետախուզական ծառայությունից տեղեկանալու Ռուսաստանի նախագահի հիվանդության մանրամասնությունների մասին: Հոկտեմբերի 30-ին ԱՄՆ նախագահ Բիլ Քլինթոնը մամուլին հայտարարել է, որ բավականաչափ պաշտոնական տվյալներ է ստացել ՌԴ նախագահ Բորիս Ելցինի առողջական վիճակի վերաբերյալ եւ հույս հայտնել, որ «ամեն ինչ լավ կլինի»: ԱՄՆ նախագահի վարչակազմի ներկայացուցիչներից մեկը թերթի լրագրողներին նաեւ հայտնել է, որ ՌԴ նախագահի առողջությունն այլեւս էական չէ Ռուսաստանի քաղաքականության մեջ, քանզի, նրա կարծիքով, այնտեղ «սահմանադրական նորմերի կայուն հաստատման» գործընթաց է:

«Հայերի ցեղասպանությունը փաստ է», ասել է սենատոր Բիլ Բրեդլին

ԵՐԵՎԱՆ, 1 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ. «Ազատություն» ռադիոկայանը հաղորդում է, որ ԱՄՆ-ի նախագահության թեկնածու սենատոր Բիլ Բրեդլին ելույթ ունենալով Նյու Հեմփշիր նահանգում, Թուրքիայի իշխանություններին կոչ է արել ճանաչել 1915-23 թվականների հայերի ցեղասպանությունը ու տեղահանումը: «Եթե հասարակությունը ցանկանում է առաջ ընթանալ, ապա նա պետք է լիովին հաշվի առնի իր անցյալը, ներառյալ վատ անցյալը: Իսկ հայերի ցեղասպանությունը փաստ է», ասել է Բիլ Բրեդլին:

ԱՍՈՒԼԻՍ

Արտահերթ ընտրությունների գաղափարը «Երկրապահում» դեռ հասունացած չէ

Համագումարից առաջ պարզաբանեց Արա Կեսիկյանը

ՆԱՐԻՆԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ

«Երբ այն ասիճան զարգանա արտահերթ նախագահական կամ խորհրդարանական ընտրությունների գաղափարը «Երկրապահում», մենք բնականաբար հանդես կգանք հայտարարությամբ եւ կպահանջենք այդ արտահերթ ընտրությունները: Առայժմ չենք պահանջում, ուրեմն չենք գտնում, որ այդ հարցը հասունացել է», Մամուլի ազգային ակումբի «Հրատապ թեմա» ծրագրի հյուրասրահում երեկ հավաստիացրեց ԵԿՄ աշխատակազմի ղեկավար, Աժ պատգամավոր Արա Կեսիկյանը: «Երկրապահ» կամավորական միությունը դեկտեմբերի 3-ին կգումարի իր հերթական 4-րդ համագումարը: Ավելի քան 8 հազար անդամ համախմբող միության համագումարին կմասնակցեն տարածքային բաժանմունքներից ընտրված մոտ 800 պատվիրակներ:

Կընդունվի համագումարի հայտարարություն, որ կտրվի հոկտեմբերի 27-ից հետո ստեղծված ներքաղաքական իրավիճակի գնահատականը եւ կնշվեն առաջիկա ծրագրերը: Հոկտեմբերի 27-ի իրադարձություններից հետո «Երկրապահը», որը փաստացի միավորում է բանակային ուժերին, վերստին հայտնվեց քաղաքականության կիզակետում, ճիշտ ինչպես 96 թ. սեպտեմբերի 22-ի նախագահական ընտրություններից հետո: Իրավացի էր Աժ-ում դաժանաբար սպանված վարչապետ Վազգեն Սարգսյանը, երբ դեռ պատերազմի նախաշեմ եղած ժամանակ ասում էր՝ եթե պատերազմի նախարարը չի զբաղվում քաղաքականությամբ, քաղաքականությունն է զբաղվում բանակով: «Երկրապահի» ստեղծումն արդյունք էր արցախյան ազատամարտի հետեւանքով հասարակական գործոն դարձած, պատերազմով անցած մարդկանց մի լուրջ շերտի անկախատեսելի գործունեությունից հետո պահելու եւ պետության կողմից վերահսկելի դաշտում տեղավորելու ձգտման:

Սակայն անցումային շրջանում գտնվող եւ ժողովրդավարությունից դեռեւս հեռու պետություններում հասարակության այս շերտին միշտ էլ փորձում են քաղաքականացնել եւ անգամ գործիք դարձնել տարբեր խաղերում: Վկան՝ եւ 95 թ. խորհրդարանական ընտրությունները, եւ 96-ին նախագահական ընտրությունները: ԵԿՄ ներկայիս փոխնախագահ Ալբերտ Բազեյանը, որն այժմ Երեւանի քաղաքապետն է, նախորդ խորհրդարանում հանիցս փաստել է, որ «Երկրապահին» պետական տարբեր կառույցներ ներքաշել են քաղաքական խաղերի մեջ: Այսօր տպավորություն է ստեղծվում, թե «Երկրապահն» ինքն է ուզում քաղաքականացվել, թեեւ Արա Կեսիկյանը համագումարից առաջ ՄԱԱ հանդիպման սրահում ամեն կերպ փորձեց հավատացնել, թե «Երկրապահում» տարաձայնություններ եւ խմորումներ չկան, ԵԿՄ-ն չի պատրաստվում քաղաքականանալ, քանզի նրա քաղաքականացված մասն արդեն իսկ «Հանրապետական» կուսակցության անդամ է. «Հանրապետական կուսակցության քաղաքական խորհրդում մենք 7 երկրապահ ունենք», «Ազգի» հարցին պատասխանեց Արա Կեսիկյանը:

Տես էջ 3

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՈՒՇԱԳԻՐ

Դեկտեմբերի 1-ը ԴԱՎ-ի դեմ պայքարի համաշխարհային օրն է

Իսկ ԴԱՎ-ը չի նահանջում

Դեկտեմբերի 1-ը ԴԱՎ-ի (ՁԻԱՀ) դեմ պայքարի համաշխարհային օր է հայտարարված, եւ ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակում երեկ հրավիրված ճնշարկման ընթացքում լրագրողներին տրամադրվեցին այդ առթիվ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Կոֆի Անանի եւ ՄԱԿ-ի ԴԱՎ-ի հարցերի գործակալության գործադիր տնօրեն Փիթեր Փայոթի ուղերձները: 20-րդ դարի ժանտախտի աղետալի արշավը կասեցնելու մտահոգությամբ եւ 1999 թ.-ին ԴԱՎ-ի արձանագրած «հունձի» վերաբերյալ տեղեկատվությամբ: Միայն 1999 թ.-ին 5,6 մլն մարդ է վարակվել այդ ախտով վարակվածների թիվը 33,6 մլն-ի հասցնելով (համաճարակի բռնկման պահից ի վեր ԴԱՎ-ով վարակված 50 մլն հիվանդներից 16 մլն-ը մահացել են): Մահացածների թիվն այս տարի ռեկորդային էր՝ 2,6 մլն, եւ աճելու միտում ունի: Աֆրիկայի հարավում (Անդրսահարյան Աֆրիկայում), որտեղ ապրում է ԴԱՎ-ի վիրուսակիրների 70 տոկոսը, առաջին անգամ մեծամասնություն (55 տոկոս) են կազմել կանայք: 2 մլն-ով գերազանցելով տղամարդկանց, աննախադեպ է երեխաների հիվանդացության եւ մահացության ասպիճանը, կանանց ծնելիությունը 20 տոկոսով նվազել է, զարգացած երկրներում վիրուսակիրների թիվն ամեն տարի ավելանում է 75 հազարով: Հիվանդությունը «երիտասարդացման» հակում ունի: ԴԱՎ-ով պայքարող, ծնողներից մեկին կորցրած մինչեւ 15 տարեկան երեխաների թիվը հասնում է 11,2 մլն-ի: Մահաբեր մանրէն գրոհում է զարգացող երկրները, խոչընդոտվում աղքատության, վատառողջության գործոններով:

Շարիի դեմ պայքարի արդյունավետացման նպատակով ՄԱԿ-ի ԴԱՎ-ի դեմ պայքարի ծրագրի (UNAIDS) շրջանակում ստեղծվել են հատուկ թեմատիկ խմբեր: Հայաստանում այդ խմբի աշխատանքները ղեկավարող ՄԱԿ-ի մշակութային համակարգող Կաթիցա Չեկալովիչը եւ ծրագրի պատասխանատու Անահիտ Սիմոնյանը երեկ ներկայացրին UNAIDS-ի տարեկան ամփոփագիրը: ընդգծելով քարոզչության դերը ԴԱՎ-ի կանխարգելման գործում: Հանդիպմանը ներկա էր Աժ սոցիալական, առողջապահության, բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Գագիկ Թադեւոսյանը, որը կարեւորեց 1995-ից Հայաստանում գործող ԴԱՎ-ի մասին օրենքը: Վերջինս նախորդ շաբաթ հանձնվեց «Արմենիկում» դեղամիջոցով բուժման նպատակով Հայաստան ժամանող օտարերկրյա քաղաքացիների մուտքը կարգավորող փոփոխություններով: ԴԱՎ-ով հիվանդների թիվը Հայաստանում փոքր է, սակայն սա դեռեւս չի նշանակում, թե այդ արհավիրքը չի թակում մեր դուռը, ասաց Աժ պատգամավորը:

ՁԻԱՀ (ԴԱՎ-ի) կանխարգելման կենտրոնի տնօրեն Սամվել Գրիգորյանն ամփոփեց ԴԱՎ-ի «հայաստանյան ներկան»: ԴԱՎ-ի վիրուսակիրների եւ հիվանդների թիվը մեզ մոտ հասել է 104-ի (26-ը կանայք են), այդ թվում 28-ը (20 տղամարդ եւ 8 կին), ասել է թե նախորդ տարի գրանցված դեպքերի եռապատիկը, արձանագրվել է 1999 թ.-ին: Վարակակիր տղամարդկանց միջին տարիքը 25-39 է, կանանցը 25-34, 18-ը հիվանդ է ԴԱՎ-ի համախտանիշով, 10-ը մահացել է: Երեւանում 1999 թ.-ին գրանցված վիրուսակիրների թիվը (14), նախորդ տարվա ցուցանիշը գերազանցում է 4,7 տոկոսով, 104-ից 50-ը բաժին է ընկնում Երեւանին, մնացածը ըստ վիրուսակիրների թվի, Գեղարքունիքի, Շիրակի, Արմավիրի, Լոռու, Արագածոտնի, Կոտայքի, Արարատի եւ Սյունիքի մարզերին:

Վարակակիր տղամարդկանց 46 տոկոսին ԴԱՎ-ի մանրէն փոխանցվել է ներերակային ճանապարհով: հիմնականում Հայաստանից դուրս բնակություն հաստատած թմրամոլների միջոցով, 35,5 տոկոսը հետերոսեքսուալ հարաբերությունների հետեւանքով: Վիրուսակիրների գրեթե կեսը 25-34 տարեկան վերարտադրողական տարիքի երիտասարդներ են: ԱՊՀ տարածքում, հատկապես Ուկրաինայում եւ Ռուսաստանում, ԴԱՎ-ի նվաճած բնագծերը սպառնալից են եւ աճի առումով առաջ են ընկել աշխարհի մյուս երկրներից: վերջին երկու տարում վիրուսակիրների եւ հիվանդների թիվը կրկնապատկվել է, Ռուսաստանում թմրամոլների թիվը վերջին 5 տարում տասնապատկվել, հասնելով 2 մլն-ի: Մոսկվայում վերջին 10 ամիսներին վիրուսակիրների թիվը եռապատկվել է, ամբողջ Ռուսաստանում հասել ավելի քան 100 հազարի, Ուկրաինայում տարվա վերջին կիսամսյակի 200-240 հազարի, իսկ 2016 թ.-ին ուկրաինացիների թիվը միայն ԴԱՎ-ի պատճառով կնվազի 2 մլն-ով:

Ինչ վերաբերում է Երեւանում ԴԱՎ-ի բուժման կլինիկայի շինարարությանը, ապա դեկտեմբերի 10-ին ըստ ամենայնի շահագործման կհանձնվի: Հարցերին պատասխանելով, Գագիկ Թադեւոսյանը չափազանցված համարեց այն մտավախությունը, թե «Արմենիկումի» գաղտնիքը բավարար չափով պաշտպանված չէ, առավել եւս, որ բուժման գործընթացը վստահված է մասնավոր ընկերության: Դեկտեմբերի 27-ից հետո անվճարության մարմինների նկատմամբ որոշ անվստահություն, անշուշտ, առկա է, բայց ծայրահեղ հոռետեսության հիմքեր չկան, նկատեց կոմունիստ պատգամավորը հույս հայտնելով, թե դեղամիջոցի գաղտնիությունը հուսալի ձեռքերում է: Հանդիպման եւս երկու մասնակից կրթության նախարարության առողջապահության հարցերով պատասխանատու Անահիտ Մուրադյանը եւ «Հույս եւ օգնություն» հասարակական կազմակերպության ղեկավար Ենոք Շահվորյանը ներկայացրին ԴԱՎ-ի դեմ պայքարի քարոզարշավը դասընթացներ եւ ուսուցողական բուկլետների տարածում, ռադիո եւ հեռուստահաղորդումներ, հանդիպումներ ուսանողության հետ եւ այլ կրթական միջոցառումներ, որոնք կոչված են կանխարգելելու ԴԱՎ-ի տարածումը Հայաստանում եւ իրագործվում են ՄԱԿ-ի աջակցությամբ:

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

ՄԻՋՊԵՏԱԿԱՆ

Պետր Ստոյանով. «Բուլղարիան Հայաստանի համար Արեւմտյան...»

Սկիզբը էջ 1

Պատվիրակության ժամանմանը հաջորդեցին երկու երկրների նախագահների առանձնազրույցը եւ հայ-բուլղարական բանակցություններն ընդլայնված կազմով: Ինչպես տեղեկացանք նախագահի մամուլի գրասենյակից, առանձնազրույցի ընթացքում քննարկվել են երկկողմ հարաբերություններին, տարածաշրջանային եւ միջազգային կազմակերպությունների շրջանակներում համագործակցությանն առնչվող հարցեր: Ռոբերտ Քոչարյանն ու Պետր Ստոյանովը համակարծիք են, որ արդեն ձեւավորված իրավական դաշտը եւ Հայաստանի ու Բուլղարիայի միջեւ առկա բարիդրացիական մթնոլորտն ամուր հիմք են միջպետական կապերը որակական նոր մակարդակի բարձրացնելու:

Բուլղարական պատվիրակությունը երեկ հանդիպել է նաեւ Աժ նախագահ Արմեն Խաչատրյանին եւ խորհրդարանականներին: Նման հագեցած օրակարգն իր հիմնավորումն ունի, ինչն էլ լսեցինք պրն Ստոյանովի շուրթերից. սա նախագահի առաջին այցելությունն է Հայաստան եւ, առհասարակ, մեր երկրի անկախացումից ի վեր նա այստեղ այցելած առաջին բուլղարացի նախագահն է: Պրն Ստոյանովը բազմիցս նշեց, որ ինքն այցելել է մի երկիր, որն, անկասկած, Բուլղարիայի բարեկամն է: Պրն Ստոյանովը ցավակցություն ու կարեկցանք հայտնեց հոկտեմբերի 27-ի ողբերգության կապակցությամբ՝ մաղթելով, որ Հայաստանն արագորեն հաղթահարի ծգնաժամային տրամադրությունները: Բուլղարահայությանը որակելով որպես կամուրջ Հայաստանի ու Բուլղարիայի միջեւ՝ նախագահ Ստոյանովն ասաց, որ պատվիրակության թվի կեսը՝ հայեր են, որն արվել է իր նախաձեռնությամբ, միտումնավոր: Հայաստան այցելության նպատակը, Ստոյանովի ամփոփ ներկայացմամբ, առեւտրատնտեսական, մշակութային եւ մի շարք այլ միջպետական կապերի հնարավորինս խորացումն է:

Այս հավաստիացումներին հաղորդակցվեցին երկու երկրների նախագահների, նախարարների ու կառավարական այլ պաշտոնյաների միջեւ ստորագրվեցին մի շարք միջպետական համաձայնագրեր: Նախագահների միջեւ կնքված համաձայնությանը հաջորդեցին միջկառավարական համագործակցության փաստաթղթերի ստորագրումներ, կրթության, մշակույթի, գիտության, տրանսպորտի, վիճակագրության, հեռահաղորդակցության, զբոսաշրջության, մամլոյին եւ այլ ոլորտներում առաջիկա 2 տարվա հայ-բուլղարական ծրագրերը վավերացնող:

Այնուհետեւ Երեւանի քաղաքապետ Ալբերտ Բազեյանը Պետր Ստոյանովին շնորհեց Երեւանի պատվավոր քաղաքացու կոչում:

Պրն Ստոյանովը, ի նշան երախտագիտության, կենսաբանակ նկատեց, որ երբ լրանա իր նախագահական մանդատի ժամկետը, ինքը բերեւս աղաստանի Երեւանում եւ զբոսնի համաքաղաքացիների հետ:

Աշխատանքային օրվա հանգույցը երկու նախագահների համատեղ մամուլի ասուլիսն էր, որի ընթացքում ամփոփվեցին պայմանավորվածությունների արդյունքները: Ռոբերտ Քոչարյանը հայտնեց, որ ստորագրված համաձայնագրերի թիվը 8-ն է: Երկու նախագահներն էլ աշխատանքային օրը գնահատեցին որպես չափազանց արդյունավետ: Պետր Ստոյանովի խոսքերով՝ թեպետ Բուլղարիան, եւ Հայաստանը բարդ ու բախումնային տարածաշրջաններում են գտնվում, սակայն, անհամաձայնությունների լուծման դեպքում, երկու տարածաշրջանների տնտեսական աղաղան էլ խոստումնալից է: «Բուլղարիան կարող է Արեւմտյան Եվրոպայի դարպաս դառնալ Հայաստանի համար», ասաց պրն Ստոյանովը: Անշուշտ, համագործակցության գլխավոր երախիքը տրանսպորտային կապերն են: այս կապակցությամբ երկու նախագահներն էլ մեծ հույս են տածում հատկապես TRACECA ծրագրի հանդեպ: Բուլղարիայի նախագահը լիովին իրատեսական համարեց այդ ծրագրի ծյուղավորումներից թիվ 8 ճանապարհային միջանցքի գաղափարը, որի կենսագործման շնորհիվ Սեւ ծովի միջոցով կմիավորվեն Հայաստանը, Վրաստանը, Բուլղարիան եւ Իրանը: Այս նախագիծը ինչպես նշվեցին էր դեռեւս անցյալ դեկտեմբերին Երեւանում: Կողմերը հավաստիացրին, որ միանգամայն լրջորեն են վերաբերվում նման միջանցք ստեղծելու հնարավորությանը եւ պատրաստ են ստորագրելու իրենց համաձայնությունը վավերացնող փաստաթուղթ: Իսկ առաջիկա հարցի առնչությամբ ստեղծվել ու գործելու է երկկողմ հանձնաժողով, որ նախագահելու են Հայաստանի եւ Բուլղարիայի տրանսպորտի նախարարները: Ըստ երկու երկրների նախագահների՝ նման միջանցքը միայն կնպաստի տարածաշրջանում խաղաղության հաստատմանն ու քաղաքական վիճակի կայունացմանը:

Որպես հայ-բուլղարական հարաբերությունների հեռանկարայնության եւս մի փաստ՝ Պետր Ստոյանովը տեղեկացրեց, որ շաբաթ շուտով գործելու է Հայաստանում Բուլղարիայի դեսպանատունը, իսկ դեսպանի պաշտոնակատարն այս այցելության ընթացքում ուղեկցում էր նախագահին եւ պատվիրակության կազմում էր:

Նախագահ Ստոյանովը ցույց է տալիս քաղաքապետ Բազեյանից ստացած խորհրդանշական բանալին

Կանայք համայնքների զարգացումը երկրի զարգացման նախապայման են համարում

Գիտությունների ազգային ակադեմիայի կլոր դահլիճում դեկտեմբերի 1-ին հրավիրված հանրապետական խորհրդաժողովում կանանց հանրապետական խորհուրդը ճնշարկման էր դրել տարեկզբից մարզերում ու համայնքներում կատարած ուսումնասիրության արդյունքները: Դրանք ամփոփված էին «Կանայք, գենդերը եւ տեղական ինքնակառավարումը» վերնագրով գրքույկում, որը բաժանվեց խորհրդաժողովի մասնակիցներին: ԿՀԽ-ի նախագահ Նորա Հակոբյանը համայնքներում սեմինարներ անցկացնելը կարեւորեց այն տեսանկյունից, որ կայուն զարգացման, ժողովրդավարության եւ քաղաքացիական հասարակության ստեղծման հիմքն այստեղից է սկսվում:

Տկն Հակոբյանը շեշտեց, որ համայնքներում իրենց լավ են ընդունել՝ ԿՀԽ-ի այցելությունը դիտելով վերջին տարիներին մայրաքաղաքի ու ծայրամասային շրջանների միջեւ ստեղծված անջրպետի հաղթահարում: Հանդիպումների ընթացքում կանանց ծանոթացրել են կրթական ծրագրերին, ուսումնասիրել սոցիալական համակարգը եւ բնակչության սոցիալական վիճակը, ստեղծել են ԿՀԽ-ի տեղական կազմակերպություններ՝ հիմք ստեղծելով համայնքներում կանանց դերակատարման ակտիվացման ու մյուս ՀԿ-ների հետ համագործակցության համար: Հավաքված վիճակագրությունը փաստել է նաեւ, որ ծնելիությունը 3 անգամ անկում է ապրել, որը նշանակում է՝ «ինչ-որ բան սխալ է տեղական ինքնակառավարման համակարգում»:

Խորհրդաժողովի մասնակիցները, որոնք հիմնականում համայնքների ներկայացուցիչներ էին, ՀՀ տարածքային կառավարման նախարար Խոսրով Հարությունյանից ակնկալում էին կուտակված հարցերի պատասխաններ եւ նախարարի վերաբերմունքը՝ համայնքային կյանքում կանանց մասնակցության հարցին: Պրն Հարությունյանը համաձայն էր, որ համայնքներում ժողովրդի ակտիվությունը նվազել է այն ասպիճան, որ 8 համայնքներում անգամ համայնքապետի թեկնածու չի առաջադրվել, իսկ 250-ից ավելի համայնքներում ավագանիներ չեն առաջադրվել: Նախարարը համամիտ էր, որ բարեփոխումները պետք է սկսել տեղական ինքնակառավարման մարմիններից՝ առաջնահերթ լուծելով աղքատության խնդիրը, որի լուծումները, սակայն, պետք է փնտրել երկրի տնտեսության բարելավման մեջ: Պետության կողմից համայնքներին ֆինանսավորելու հարցադրմանը նախարարը հակադրեց իր տեսակետը՝ մասնանշելով տեղական բյուջեն լցնելու եկամտի այն աղբյուրները, որոնք հանրության համար հիմնականում տեսանելի չեն: Համամիտ էր նաեւ, որ կանանց մասնակցությունը տեղերում անհամեմատ ավելի արդյունավետ կլինի տեղական կյանքի բարելավման հարցերում:

ԿՀԽ-ի կողմից ընդգծվեց, որ համայնքների ավագանու կազմում կանանց փոքր լինելը չի նշանակում, թե չկան պատրաստված, խելացի եւ հասարակական կյանքին արժանի կանայք: Պարզապես կնոջ ուսերին ծանրացած սոցիալական բեռը նրանց դրել է անհավասար պայմանների մեջ, հետեւաբար կանանց համար դժվարացել է դիմակայել մրցակցությանը: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է առաջին հերթին հաղթահարել աղքատությունը:

Ա. Պ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակվում է 8 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Թաղ. 529353, AT&T (37421) 151065,
e-mail INTERNET azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՀՐԱՅՐ ՁՕՐԵԱՆ / հեռ. 562863
Համակարգչային ծառայություն / 562941
Apple Macintosh համակարգչային ծառայություն «Ազգ» թերթի
Յուրաքանչյուր «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՈՒՇԱԳԻԿ

Կոռուպցիան վտանգում է Հայաստանի ազգային անվտանգությունը

Ամ եւ կառավարության դիրքորոշումներն այստեղից բաժանվում են

«Կոռուպցիայի դեմ պայքարի առաջարկվող օրենագիծը որեւէ նոր բան չի ավելացնում գոյություն ունեցող իրավիճակին եւ չի պատասխանում բոլոր այն հարցերին, որոնք առնչված են կոռուպցիայի հետ: Բոլոր պարագաներում հարկ չկա առանձին օրենք ընդունել կոռուպցիայի մասին, գուցե անհրաժեշտ է կազմակերպչական այլ օրենք կամ որոշում կոռուպցիայի դեմ պայքարի միջոցառումների մասին, որը լիովին այլ բան է», **«Ազգին»** երեկ նշեց նաեւ Հայաստանի կոնկրետ ոլորտներ, ուր կոռումպացվածության աստիճանը զգալի է եւ վտանգավոր իրավապահման մարմիններ, մաքսահարկային համակարգ եւ պաշտպանության նախարարություն: Վ. Հովհաննիսյանը չմոռացավ նաեւ խորհրդարանը առաջարկելով ոչ թե վերացնել, այլ սահմանափակել պատգամավորների անձեռնմխելիությունը: Ամ մշտական հանձնաժողովն առաջարկում է վերանայել պետության ողջ օրենսդրական դաշտը կոռուպցիայի դեմ պայքարի տեսանկյունից: Խորհրդանշական է, որ կոռուպցիայի առանձին տարատեսակների շարքում Վ. Հովհաննիսյանն իրավացիորեն հիշատակեց ընտրակաշառքը:



Կոռուպցիայի դեմ պայքարում պետական ծրագրի ընդունման շրջանակներում Ամ-ն իրեն լուրջ դրսևորում է վերապահում: Իբրեւ առաջնահերթ բայլեր Վ. Հովհաննիսյանը կարեւորում է պետական ծառայողի, լոբբիզմի մասին օրենքների ընդունումը, ինչպես նաեւ պետական պաշտոնյաների եկամուտների հայտնեց ՆԳՆ իրավական աջակցության վարչության պետ եւ ՆԳ նախարարի խորհրդական Միհայել Գրիգորյանը՝ կոռուպցիայի դեմ պայքարին նվիրված խորհրդարանական լսումների եզրափակմանը: Ամ ՆԳ, ԱԱ եւ պաշտպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վահան Հովհաննիսյանը, ինչպես խոսացել էր, շահագրգիռ լսարանին առաջարկել է ստեղծել հատուկ մարմին, որը կենթարկվի օրենսդիրներին Ազգային ժողովին: Նա պնդեց, որ հանրապետության նախագահը եւ Ամ-ն պետք է ընդունեն կոռուպցիայի ներկայացրած լուրջ վտանգը Հայաստանի ազգային անվտանգության համար: Վ. Հովհաննիսյանն անդրադարձավ կոռուպցիայի տնտեսական, սոցիալական եւ քաղաքական հետեւանքներին: Կոռուպցիայի արդյունքում մեծանում է տնտեսության ստվերային ոլորտը, առաջանում է հասարակության սոցիալական բեւեռացում սակավ մեծահարուստներ եւ ստվարաթիվ ընչազուրկներ, ծեւավորվում է օլիգարխիա: Կոռումպացված երկրներում միշտ էլ ծգտում է առաջանում է դեպի ուժեղ ձեռը եւ դիկտատուրան, սակայն դիկտատուրաների օրոք, ըստ Վ. Հովհաննիսյանի, կոռուպցիան առավել ուժեղանում է: Հիմնական զեկուցողը սանկցիոնից: Խորհրդանշական է, որ կոռուպցիայի առանձին տարատեսակների շարքում Վ. Հովհաննիսյանն իրավացիորեն հիշատակեց ընտրակաշառքը:

Կոռուպցիայի դեմ պայքարում պետական ծրագրի ընդունման շրջանակներում Ամ-ն իրեն լուրջ դրսևորում է վերապահում: Իբրեւ առաջնահերթ բայլեր Վ. Հովհաննիսյանը կարեւորում է պետական ծառայողի, լոբբիզմի մասին օրենքների ընդունումը, ինչպես նաեւ պետական պաշտոնյաների եկամուտների եւ ծախսերի հայտարարագրման մեխանիզմների օրենսդրական հստակեցումը: Իրենց եկամուտները եւ ծախսերը պետք է հայտարարագրեն ինչպես օրենսդիր, գործադիր, այնպես էլ դատական համակարգերի պաշտոնյաները:

«Հոնքն ուղղելու փոխարեն, աչքն էլ չվնասել»

Միհայել Գրիգորյանը, որը հարակից զեկուցմամբ հանդես եկավ, համոզված էր, որ կոռուպցիայի դեմ պայքարի հարցում շատերը չարժե. «Այսօր էլ գոյություն ունեցող օրենսդրական դաշտը համապատասխան քաղաքական կամքի եւ հետեւողականության պայմաններում բավարար է կոռուպցիայի դեմ պայքար մղելու համար»: Կարծում ենք, Միհայել Գրիգորյանը ճիշտ շեշտադրեց համապատասխան քաղաքական կամքի գործոնը: Տարածքային կառավարման նախարար Խոսրով Հարությունյանն իր ելույթում համակարծիք էր: Նա աննպատակահարմար համարեց կոռուպցիայի դեմ պայքարի առանձին մարմնի ստեղծումը, առավել եւս եթե այն պետք է ենթակա լինի խորհրդարանին:

Ամ լսումներին ներկա էին նաեւ Համաշխարհային բանկի հայաստանյան ներկայացուցիչներ, որոնց հիմնական առարելությունը, ինչպես մասնավորեց Վիգեն Սարգսյանը, նախազգուշացնելն է, թե տարբեր պետություններում ինչպես է ավարտվել կոռուպցիայի դեմ պայքարը: Նախադեպեր կան եւ վիուկներ որ սկսելու, եւ կոռուպցիայի դեմ պայքարի անվան տակ կլանները մեկը մյուս կլանի դեմ հանելու, այսինքն անցանկալի կլանն ամբարեզից վերացնելու: Չպետք է մոռանալ նաեւ, որ կոռուպցիայի դեմ պայքարի չափազանց ամբագոռգոռ կարգախոսները կարող են լուրջ ազդել տվյալ պետության միջազգային վարկանիշի վրա:

Ամ-ն եւ խորհրդարանը համակարծիք են միայն մեկ հարցում. «Այսօր պետք է անկաշկանդ խոսել կաշառակերության մասին եւ չգայթակղվել այն պնդմամբ, թե իբրեւ կոռուպցիան հատուկ է միայն զարգացած երկրներին, ընդհակառակը անցումային երկրներում այդ երեւույթն առանձնահատուկ զարգացում է ստանում», բայց պայքարի մարտավարությունը գործադիր եւ օրենսդիր մարմինները տարբեր կերպ են ընբռնում: Խոսրով Հարությունյանն իրավացի էր. դատախազության եւ իրավապահ բոլոր մարմինների աշխատողները չեն կարող հետեւել բոլոր-բոլոր չինովնիկներին. «Պետք է ստեղծել այնպիսի պետություն, որտեղ չինովնիկն իրավունք չունենա միջամտել քաղաքացիների կյանքին: Պետության գործունեությունը պետք է լինի հրապարակային, թափանցիկ, ինչպես հասարակությանը պարզված ձեւ»:

Ն. ԳԻԼԲԱՐՅԱՆ

ԱՐՏԱԳՆԱ

Դեկտեմբերի 3-5-ը՝ Արցախ-Հայաստան գործարար համաժողով

Դեկտեմբերի 3-5-ը հայաստանցի մոտ 50 գործարարներ ու արդյունաբերողներ կայցելեն Լեռնային Ղարաբաղ՝ մասնակցելու Արցախ-Հայաստան գործարար համաժողովին: Այցելությունը նախաձեռնել է ՀՀ արդյունաբերողների ու գործարարների միությունը՝ նպատակ ունենալով զարգացնել Հայաստան-Արցախ տնտեսական հարաբերությունները, գործարար կապերը, պարզել հնարավոր համագործակցության, արտադրական մասնաճյուղեր բացելու, ներդրումների ու աշխատատեղեր ստեղծելու հնարավորությունները: Այցելության առաջին օրը հայաստանցի գործարարներին կընդունեն ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանը, վարչապետ Անուշավան Դանիելյանը: Պաշտոնական հանդիպումների ընթացքում կքննարկվեն համագործակցության հնարավորությունները, իսկ ավելի կոնկրետ քննարկումները, Հայաստանի ու Արցախի գործարարների ու արդյունաբերողների միջեւ, կշարունակվեն հաջորդ օրը Ստեփանակերտում անցկացվելիք գործարար համաժողովում: Համաժողովի շրջանակներում կկազմակերպվի նաեւ Արցախի մոտ 15 արտադրական ձեռնարկությունների ադրանքների ցուցահանդես: Արցախում զարգացած է հատկապես տնտեսության ագրարային ճյուղը: Այս հեռանկարային ճյուղի ձեռնարկություններն էլ հիմնականում կներկայացնեն իրենց արտադրանքն ու համանման ոլորտի հայաստանյան ձեռնարկությունների հետ կքննարկեն համագործակցության նախագծեր: Նախատեսվում են նաեւ այցելություններ ԼՂՀ տարբեր շրջանների արտադրական ձեռնարկություններ:

Գ. Ս.

Վանաձորում գազ տվեց երկու բազմաբնակարան շենքերի

Մինչեւ հանրապետության շրջափակումը, Լոռու մարզում եղել են 48 հազար բաժանորդներ, որոնք ունեցել են գազամատակարարում: Իսկ այսօր նրանք 8 հազար են, որոնցից 2 հազարը Վանաձորում: Սակայն, ինչպես հայտնի է, հանրապետությունում արգելված է բազմաբնակարան շենքերի գազամատակարարումը: Լոռու մարզպետ Հենրիկ Քոչինյանի համաձայնությամբ վերսկսել Վանաձորում բազմաբնակարան շենքերի գազամատակարարումը, վերջապես պսակվեցին հաջողությամբ: Հանրապետության բազմաբնակարան շենքերից փորձնական առաջինը Վանաձորում Ձորավար Անդրանիկ փողոցի թիվ 95 եւ 97 շենքերում ծխնան առաջին օրը վառվեց երկնագույն կրակը: Այդ շենքերի 77 բնակարանների գազամատակարարման համար մուծված են կանխավճարները եւ տեղադրված հաշվիչները:

Փորձարկումն անցավ հաջողությամբ, իսկ բնակիչների հետ կնքվող պայմանագրերով նաեւ խստագույնս պետք է պահպանվեն անվտանգության կանոնները: Իսկ նրանց համար, ովքեր ցանկանում են գազով ջեռուցել բնակարանները, նախատեսված են հատուկ վառարաններ: Դրանք կարելի է ձեռք բերել քաղաքապետարանների միջոցով դիմելով քաղաքապետարաններին, իսկ այն բնակիչները, ովքեր այլ տեղերից են ձեռք բերել, տեղադրումը պետք է իրականացնեն միայն «Լոռիգազ» ձեռնարկության մասնագետների միջոցով: Վառարանների արժեքը համեմատաբար ցածր կլինի, եթե ցանկացողները շատ լինեն: Ինչպես տեղեկացանք, մինչեւ Ջերմուկի դեպքերը, Վանաձորում գազիֆիկացված է եղել բազմաբնակարան 27 շենք, որի բնակիչները նույնպես մուծել են կանխավճարները եւ գազ կստանան ՀՀ կառավարության սպասվող որոշումից հետո:

Մ. Մ.

Արտահերթ ընտրությունների գաղափարը «Երկրապահում» դեռ ...

Սկիզբը էջ 1

ԵԿՄ վարչությունը կընտրի նախագահների մեկական թեկնածություն՝ Վազգեն Սարգսյան եւ Մանվել Գրիգորյա՞ն

Հոկտեմբերի 27-ից հետո ստեղծված նոր իրավիճակում ԵԿՄ-ն պատրաստվում է կանոնադրական լուրջ փոփոխություններ կատարել: Համագումարին ներկայիս վարչությունն առաջարկելու է ընտրել «Երկրապահ» միության նախագահ, թեկնածուն միակն է եւ աներկբայելի՝ Վազգեն Սարգսյանը, որից հետո վարչությունը կընտրի իր նախագահին, որի թեկնածության պարագայում միանձնակություն դեռեւս չկա, թեեւ Արա Կեսիկյանը լավատեսորեն պնդեց. «Նոր վարչությունն, ամենայն հավանականությամբ, կքննարկի նախագահի մեկ թեկնածություն»: Այսօր ԵԿՄ վարչությունը բաղկացած է 25 անդամից, համագումարում հնարավոր է վարչության կազմի ընդլայնում մինչեւ 35 հոգի: Գործող կանոնադրությամբ վարչությունն առնվազն 3 ամիսը մեկ պետք է գումարի նիստեր: Արագ արձագանքում պայմանները ներկա քաղաքական պայմաններում սա լուրջ բացթողում է, եւ ԵԿՄ որոշ անդամներ առաջարկում են վարչության կազմում ձեւավորել նախագահություն՝ 7 կամ 9 անդամից, որոնք հերթական նիստեր կգումարեն նվազագույնը ամիսը մեկ, իսկ արտահերթ նիստեր կարող են հրավիրել հարցերի հրատապության թելադրանքով: Լրագրողների համար ջանքերին հստակեցնելու ԵԿՄ վարչության նախագահի առավել հավանական թեկնածությունը, Արա Կեսիկյանը չարձագանքեց, իսկ երբ վկայակոչվեցին ԵԿՄ ներկա վարչության մի շարք անդամների պնդումներ, թե վարչության նախագահի ամենահավանական թեկնածուն գեներալ Մանվել Գրիգորյանն է, Արա Կեսիկյանը միայն ասաց, թե հարմար չէ, որ այսօր գործող վարչությունը հրապարակի դեռեւս չընտրված վարչության նախագահի անունը: Այնուհանդերձ, իրազեկ շրջանակները պնդում են, որ դեկտեմբերի 3-4-ը ԵԿՄ նորընտիր վարչությունը նախագահ կընտրի Մանվել Գրիգորյանին: ԵԿՄ նախագահն անշուշտ չի կարող առաջադրական անձ լինել, եւ Մանվել Գրիգորյանի առջեւ, ընտրվելու պարագայում, խնդիր կծագի փոխել նաեւ իր ներկայիս աշխատանքը: Պաշտպանության նախարարությունը Վազգեն Սարգսյանի նախաձեռնությամբ կարող է կադրային եւ քաղաքական դարբնոց դառնալ նոր ուժերի համար, բայց այս դեպքում ընտրությունը պետք է միանշանակ լինի՝ կամ բանակը, կամ քաղաքականությունը:

Այժմյան պաշտպանության նախարար Վաղարշակ Հարությունյանի մասին, Արա Կեսիկյանի հավաստիացմամբ, «Երկրապահը» բարձր կարծիքի է. վերջին իրադարձություններում նա իրեն դրական է դրսեւորել: Վաղարշակ Հարությունյանը ԵԿՄ անդամ չէ. նա կկարողանա անդամակցել միությանը, որոշակի քայլերի արդյունքում: ԵԿՄ կանոնադրությամբ նրա անդամ կարող են լինել մարտական գործողությունների մասնակցած զինծառայողները կամ քաղաքացիական անձինք: **«Ազգին»** Արա Կեսիկյանը տեղեկացրեց, թե Վաղարշակ Հարությունյանի համար բացառություն կատարել հնարավոր է: Փաստենք, որ Վաղարշակ Հարությունյանի անունը եւս հիշատակվում է իբրեւ ԵԿՄ վարչության հնարավոր ղեկավարի:

Ռոբերտ Քոչարյանին առաջարկվել է ելույթ ունենալ ԵԿՄ համագումարում

«Երկրի ներքին քաղաքական իրավիճակը վերահսկվում է, թեեւ կա ներքին լարվածություն», հայտնեց է Ա. Կեսիկյանը, միաժամանակ նա արձանագրեց, որ «Միասնություն» դաշինքն այսօր առավել միասնական է, քան երբեւէ. «Գաղափարների շուրջ ստեղծված դաշինքն ամրացել է արյունով»: Նախագահ-բանակ հարաբերությունները ՄԱԱ իյուրն առաջարկեց չարել. «Պետք չէ տուր հակադրություն դնել նախագահ-բանակ հարաբերություններում: Նախագահը բանակի գերագույն հրամանատարն է: Բանակը երբեք եւ ոչ էլ իր վերջին հայտարարությամբ չի դիտանջել նախագահի հրաժարականը, բանակը լիարժեք ճիշտ գործողություններ է կատարել այդ օրերին, եւ յուրաքանչյուրը վերահսկել է այն հատվածը, որը վերապահված էր իրեն»: Ռոբերտ Քոչարյանը ոչ միայն կիրավիրվի ԵԿՄ 4-դ համագումարին, այլեւ նրան առաջարկվել է ելույթ ունենալ: Կարծում ենք, նախագահը կփորձի առավելագույնս օգտագործել այս հնարավորությունը:

«Ազգի» այն հարցին, թե ինչպես է «Երկրապահը» վերաբերվում նոր դաշտային Բորիս Նազարյանի գործունեությանը, հավելի առնելով, որ Աղվան Հովսեփյանի օրոք սկսված դատավարությունները, ինչպես օրինակ, Վանո Սիրադեղյանինն է, անընդհատ ձգձգվում են, Ա. Կեսիկյանն ընդգծեց. «Երկրապահն» անհանգստացած է ձգձգումներով եւ հուսով է, որ նոր դատախազը կվերահսկի իրավիճակը, եւ չբացահայտված գործեր հնարավորին չափ քիչ կլինեն, մենք շահագրգռված ենք, որ բոլոր գործերը շուտափույթ բացահայտվեն»:

Վանո Սիրադեղյանի՝ Վազգեն Սարգսյանին ուղղված հայտնի նամակին Ա. Կեսիկյանն առաջարկեց մեծ կարեւորություն չտալ. «Վանո Սիրադեղյանի դիրքորոշումը (իմա՝ հակաքոչարյանական, հակաղարաբաղյան ուղղվածությունը) հայտնի էր մինչեւ նամակի հրապարակումը»:

Հոկտեմբերի 27-ի դեպքերի նախաշնության վերաբերյալ Արա Կեսիկյանը «Երկրապահի» անունից հավաստիացրեց, որ ճանաչելով զինդատախազ Գագիկ Ջհանգիրյանին, իրենք համաձայն են հետաքննության հաջող ընթացքին, քննչական խմբի արհեստավարժությանը. «Այսօր չի կարելի բացառել որեւէ վարկած: Բնականաբար, այն 5 հոգին՝ գումարած մյուս ձերբակալվածները, չէին կարող հանդիսանալ պարագլուխներ, եւ, կարծում եմ, որ լուրջ ուժեր կային կանգնած տեռորիստների ետեւում»: Հոկտեմբերի 27-ին հետեւած իրադարձությունների շարանում՝ ներառյալ Սերգեյ Բաղդասյանի անակնկալ մահը Մոսկվայում, Ա. Կեսիկյանը վաղաժամ համարեց ինչ-որ կապ տեսնելը, թեեւ ասաց. «Միգուցե ինչ-որ շղթա կա, ժամանակը ցույց կտա»: ԼՂՀ հարցի կարգավորման բանակցությունների վերաբերյալ ԵԿՄ դիրքորոշումը դեռեւս ամբողջական չէ, որովհետեւ տեղեկացվածության աստիճանը ցածր է, սակայն Արա Կեսիկյանը մի շեշտադրումից չխուսափեց. «Տարածքներ դե ֆակտո կարգավիճակի դիմաց» սկզբունքին մենք համաձայն ենք, բայց հարցը չի վերաբերում Լաչինին եւ Քելբաջարին»:

digitised by A.R.A.R.@

ազգային

Ամուսնություն եւ ամուսնալուծություն

Զգացմունքները լռում են, երբ աղաղակում են կենսապայմանները

Խորհրդային շրջանի վիճակագրությունը փաստում է, որ 15 հանրապետությունների շարքում ամուսնալուծությունների ամենացածր ցուցանիշն արձանագրված էր Հայաստանում: Այն ժամանակ հարստորեն կրկնում էին հիշյալ իրողությունը, որ հարգանք ու գարմանք էր առաջացրել հարեւան հանրապետություններում: Բնականաբար: Այլ կերպ չէր էլ կարող լինել: Մենք հայերս, ամուր ենք կառչած ավանդույթներին ու արժասներին, եւ ընտանիքի պահպանումը մեզ համար վեր է ամեն ինչից:

Սակայն, թերեւս, չկան ավանդույթներ, որոնք տեղի չտան ժամանակի թելադրանքի ու նոր օրենքների առջեւ: Ի՞նչ հիմքի վրա են կառուցվում ներկայիս հայ ընտանիքները, ինչպե՞ս են գոյատեւում եւ ինչո՞ւ չեն գոյատեւում, այս խնդիրներն էլ կփորձենք վերլուծել: Իսկ հարցին անդրադառնալու դրդապատճառը մեկն է. Հայաստանում տագնապալի մեծ թիվ են կազմում ամուսնալուծությունները, եւ առայժմ նվազման միտում չի նկատվում:

Պատճառահետեւանքային կապը

Ավանդույթի ուժն էլ թուլանում է, ինչն ունի իր փիլիսոփայական-հոգեբանական եւ ավելի առարկայական պատճառները: Հոգեբանական տեղաշարժերն առայժմ չդիտարկելով անդրադառնանք հիշյալ առարկայական պատճառներին: Ամուսնալուծությունների վերաբերյալ նյութերի հայթայթումն ինձ հնարավորություն տվեց հանդիպելու խնդրին ի պատսպոնե անմիջականորեն առնչվող շատերին ՀԱԳՍ-երի ու ժողդատարանների աշխատակիցների եւ այլոց. բոլորն ամուսնալուծությունների ավելի քան 90 տոկոսի պատճառը միահամուռ համարում են սոցիալ-տնտեսական ծանր կացությունը: Եվ ընտանիքների քայքայման լոկ 10 տոկոսի «մեղքն» են վերագրում հոգեբանական գործոններին:

Իրոք, ընտանիքի նյութապես գոյատեւման հիմնահարցն այսօր անկարելի է դարձել մնացյալ բոլոր խնդիրները, որոնք այլ պայմաններում, նույն խորհրդային շրջանում, առաջնային նշանակություն ունեին: Բնականոն պայմաններում նորաստեղծ ընտանիքների կամ պարզապես երիտասարդների նպատակներն ավելի կրթական, գաղափարական, ինչո՞ւ չէ, վերացական բնույթի են: Այսօր մենք չենք տեսնում եւ անում գրեթե ոչինչ, բացի փողի ետեւից հավերժական վազքից: Հետաքրքիր է դիտարկել, որ ջահել ու ծեր, կին ու տղամարդ բոլորի մտքերը լարված աշխատում են մեկ ուղղությամբ. ինչպես պարել: Հետաքրքիր է եւ միաժամանակ անչափ ցավալի, երբ հասկանում ես մարդկանց եւ ասում պայմանների թելադրանքը: Պակաս նյարդային եւ ավելի ապահով կյանք ունենալու դեպքում որքան շնորհալի երիտասարդներ կգտնեին իրենց նախասիրությունը տարիները կողմնակի եւ իրենց էլ օտար գործերի վրա վատնելու փոխարեն, քանիսը չէր հեռանա հայրենիքից կամ, տարբեր արատների տրվելով չէր կործանվի:

Անապահով ապրելակերպը կանխելու պարզ օրինակներից մեկն էլ վաղ տարիքում ամուսնություններն են: Թեպետ դրանք այսօր էլ փոքր թիվ չեն կազմում, սակայն իրենց բարձրակետին հասան չորս-հինգ տարի առաջ: Քսան-երեսուն տարի առաջ ընտանիք էին կազմում հիմնականում քսանհինգ եւ ավելի տարեկանում, երբ, ըստ խորհրդային համակարգված կյանքի, ավարտած էին լինում դպրոցն ու մասնագիտացում ապահովող որեւէ ուսումնական հաստատություն (ցանկալի էր բաւձրագույն), անմիջապես աշխատելու էին «տեղավորվում» աշխատավարձով լիովին ի վիճակի լինելով հոգալ իրենց չափավոր պահանջները:

Այս սխեման մեր օրերին հարմարեցնել, անշուշտ, չի սացվի: Հիմա շատ ընտանիքներ ուսմանն ու գիտելիքին այլեւս այն արժեքը չեն տալիս դրանում առագա եւ փող չտեսնելով: Իսկ աշխատանք ունեցողներն այժմ մի քանի տեսակի են բաժանվում: մարդիկ, որոնց աշխատելը ծեւական է, քանզի ծեւական աշխատավարձ են ստանում միայն տրանսպորտով երթեւեկության ծախսերին բավարարող, եւ մարդիկ, որոնք միայն հաշվառված են փաստացի չգործող որեւէ պետական հիմնարկում: Կան եւ այնպիսիք, որոնք տնտեսական ճգնաժամի սկզբից ի վեր թողեցին իրենց հին աշխատանքային «բույնը» եւ նոր մասնագիտություն ձեռք բերելով կամ հարմար գործ գտնելով փորձեցին հարմարվել ստեղծված պայմաններին: Մեկ այլ խավի համար փոփոխությունները ցանկալի էին, քանզի ազատեցին կաղապարից եւ ձեռներեցության համար բարենպաստ դաշտ ստեղծեցին: Այսուհետեւ էլ աշխատանք փնտրելու մեկնեցին Ռուսաստան: ոմանք տեղափոխվեցին ընտանյոք հանդերձ, ոմանք առանց ընտանիքի, անհրաժեշտ գումարը հեռվից առաքելու պայմանով: Սակայն շատերը «մոռացան» իրենց ընտանիքներից անգամ սկսում են նվազել: Ամուսնալուծությունների հիմնական տոկոսը բաժին է ընկնում մայրաքաղաքին, որտեղ տարեկան 4528 ամուսնությունից 1323-ն ավարտվում է բաժանությամբ (1997): Գյուղերում եւս, 80-ականների համեմատ, ամուսնությունների քանակը նվազել է, թեպետ ամուսնալուծություններն արձանագրող թիվը կտրուկ շրջադարձերի չի ենթարկվել: Այստեղ, հասկանալի է, մեծ դեր են խաղում ազգային ավանդույթներն ու մտածողությունը, ինչը գյուղական բնակչության կենսափիլիսոփայության հիմքն է կազմում. ամեն գնով



ը՝ պարուսի աղբյուրից կտրելով կամ Ռուսաստանում նոր ընտանիք կազմելով: Իսկ ժողովրդի մի մասն էլ, արդեն քանի՞ տարի շարունակ, ֆինանսավորվում է արտասահմանից գոյատեւելով այնտեղ հաստատված բարեկամների միջոցներով եւ երազելով շուտափույթ ու ընդմիշտ հայտնվել նրանց կողքին...

Տարբերակները բազմաթիվ են: Բայց մեր նպատակն այլ է. ընդհանուր գծերով ներկայացված այս պատկերի հիման վրա ցույց տալ, թե ինչ հողի վրա են կառուցվել ու կառուցվում վերջին ութ-ինը տարիների հայ ընտանիքները:

Փոքր-ինչ վիճակագրություն

Նման ծանր ու անհեռանկար պայմաններում զարմանալի չէ, որ ամուսնությունների թիվը նվազեց: Մարդիկ դժվարությամբ էին քարշ տալիս սեփական գոյությունը, եւ «լրացուցիչ բեռի» պատասխանատվություն ստանձնելու հաջողություն շատերը չունեին: Վիճակագրությունը դիտելով տեսնում ենք, որ 1987-ին Հայաստանում գրանցված ամուսնությունների թիվը 30259, հաջորդող տասնմեկ տարիների ընթացքում աստիճանաբար նվազում է հասնելով 11365-ի, այսինքն շուրջ 3 անգամ կրճատվելով: Երեւան քաղաքի վերջին տասնմեկ տարիների տվյալներով ամուսնությունների տարեկան թիվը շուրջ 10 հազարից իջնում է շուրջ 5 հազարի: Ամուսնալուծությունների թվային պատկերը 1987-1995 թթ. քանակական տատանումներն աննշան են (մոտավորապես տարեկան 4000 ամուսնալուծություն 28-29 հազար ամուսնության հաշվեմատությամբ), իսկ 95-ից անգամ սկսում են նվազել: Ամուսնալուծությունների հիմնական տոկոսը բաժին է ընկնում մայրաքաղաքին, ուր տարեկան 4528 ամուսնությունից 1323-ն ավարտվում է բաժանությամբ (1997): Գյուղերում եւս, 80-ականների համեմատ, ամուսնությունների քանակը նվազել է, թեպետ ամուսնալուծություններն արձանագրող թիվը կտրուկ շրջադարձերի չի ենթարկվել: Այստեղ, հասկանալի է, մեծ դեր են խաղում ազգային ավանդույթներն ու մտածողությունը, ինչը գյուղական բնակչության կենսափիլիսոփայության հիմքն է կազմում. ամեն գնով պահպանել ընտանիքը: Անշուշտ, քաղաքային, հատկապես երեւանի, բնակչությունը սեփական իրավունքների պաշտպանության, ինքնահաստատման ու բարոյականության հարցերում ավելի անկաշկանդ է, ինչով էլ (նաեւ) բացատրվում է ամուսնալուծությունների մեծ թիվը քաղաքներում:

Պատահական չէ, որ ամուսնությունների թիվը սկսում է նվազել 1988-ից: Արցախյան շարժման սկիզբը, երկրաշարժը, հանրապետության անկախացմանը հաջորդած պատերազմն ու տնտեսական երկարատեւ ճգնաժամը սովորական հունից դուրս մղեցին մարդկանց կյանքը զրկելով վաղվա օրվա երաշխիքներից, բնականոն ապրելակերպից ու բարվոք կենսամակարդակի պահանջներից: Այդ անհաստատ հողի վրա, երբ տագնապալի չափերի են հասնում գործազրկությունն ու արտագաղթը, պատերազմում մարդկային կորուստներն ու հասարակայնությունում ներքին լարվածությունը, բնականաբար նորաստեղծ ընտանիքների քանակը պիտի նվազեր: Փաստ է, որ այդ ամենի հետեւանքով Հայաստանում հատկապես արական սեռի ներկայացուցիչների պակաս է զգացվում եւ դեռ երկար կզգացվի. արդեն բազմիցս է հայտարարվել, թե յուրաքանչյուր 10-11 կնոջը «բաժին է ընկնում» մեկ տղամարդ: Այս ամենն էլ իր հերթին հանգեցրել է ծնելիության զգալի կրճատման:

Հայ ընտանիքն այսօր

Գործազրկությունն այսօր կարող ենք դիտարկել որպես հայ ընտանիքների մեծագույն չարիք ու ամուսնալուծությունների զգալի պատճառ: Տնտեսական կացությունից բխող հանգամանքների բերումով հայ տղամարդկանց մի սվար հատվածը «իայտնվեց» տանը: Նրանցից ոմանք գրվեցին աշխարհով մեկ, ոմանք այստեղ գտան իրենց տեղը, սակայն տղամարդկանց մի մասն էլ երկար ամիսներով «գամվեց» բազմոցներին չկարողանալով անելանելի ու պարտադրված պարապությունը հաղթահարելու ծեւեր գտնել: Հատկապես հայ տղամարդու համար, ըստ իր պատկերացման, թերեւս չկա ավելի նվաստացուցիչ կարգավիճակ. Դան անօգնական ու ոչ պիտանի զգալը, արտասահմանյան փորձ-ինչ նվազել է. այսօր ավելի քիչ ենք բախվում դեպքերի, երբ 15-16-ամյա աղջիկները, հաճախ ծնողների լռելյայն համաձայնությամբ, «փախչում» են ընտրած տղայի տուն:

Փոքր-ինչ շեղվելով նկատենք թե ամուսնությունների, թե ամուսնալուծությունների ճշգրիտ վիճակագրական պատկերը դժվար է վերականգնել նաեւ այն պատճառով, որ դրանց մեծ մասը պատշաճաբար գրանցված չէ, իսկ վերաբերմունքն այդ արարողությունների հանդեպ դարձել է բավականին անփույթ ու անկաշկանդ: Թե ամուսնությունների ավելի քան 90 տոկոսի պատճառը միահամուռ համարում են սոցիալ-տնտեսական ծանր կացությունը: Եվ ընտանիքների քայքայման լոկ 10 տոկոսի «մեղքն» են վերագրում հոգեբանական գործոններին:

Իրոք, ընտանիքի նյութապես գոյատեւման հիմնահարցն այսօր անկարելի է դարձել մնացյալ բոլոր խնդիրները, որոնք այլ պայմաններում, նույն խորհրդային շրջանում, առաջնային նշանակություն ունեին: Բնականոն պայմաններում նորաստեղծ ընտանիքների կամ պարզապես երիտասարդների նպատակներն ավելի կրթական, գաղափարական, ինչո՞ւ չէ, վերացական բնույթի են: Այսօր մենք չենք տեսնում եւ անում գրեթե ոչինչ, բացի փողի ետեւից հավերժական վազքից: Հետաքրքիր է դիտարկել, որ ջահել ու ծեր, կին ու տղամարդ բոլորի մտքերը լարված աշխատում են մեկ ուղղությամբ. ինչպես պարել: Հետաքրքիր է եւ միաժամանակ անչափ ցավալի, երբ հասկանում ես մարդկանց եւ ասում պայմանների թելադրանքը: Պակաս նյարդային եւ ավելի ապահով կյանք ունենալու դեպքում որքան շնորհալի երիտասարդներ կգտնեին իրենց նախասիրությունը տարիները կողմնակի եւ իրենց էլ օտար գործերի վրա վատնելու փոխարեն, քանիսը չէր հեռանա հայրենիքից կամ, տարբեր արատների տրվելով չէր կործանվի:

Անապահով ապրելակերպը կանխելու պարզ օրինակներից մեկն էլ վաղ տարիքում ամուսնություններն են: Թեպետ դրանք այսօր էլ փոքր թիվ չեն կազմում, սակայն իրենց բարձրակետին հասան չորս-հինգ տարի առաջ: Քսան-երեսուն տարի առաջ ընտանիք էին կազմում հիմնականում քսանհինգ եւ ավելի տարեկանում, երբ, ըստ խորհրդային համակարգված կյանքի, ավարտած էին լինում դպրոցն ու մասնագիտացում ապահովող որեւէ ուսումնական հաստատություն (ցանկալի էր բաւձրագույն), անմիջապես աշխատելու էին «տեղավորվում» աշխատավարձով լիովին ի վիճակի լինելով հոգալ իրենց չափավոր պահանջները:

Այս սխեման մեր օրերին հարմարեցնել, անշուշտ, չի սացվի: Հիմա շատ ընտանիքներ ուսմանն ու գիտելիքին այլեւս այն արժեքը չեն տալիս դրանում ապագա եւ փող չտեսնելով: Իսկ աշխատանք ունեցողներն այժմ մի քանի տեսակի են բաժանվում: մարդիկ, որոնց աշխատելը ծեւական է, քանզի ծեւական աշխատավարձ են ստանում միայն տրանսպորտով երթեւեկության ծախսերին բավարարող, եւ մարդիկ, որոնք միայն հաշվառված են փաստացի չգործող որեւէ պետական հիմնարկում: Կան եւ այնպիսիք, որոնք տնտեսական ճգնաժամի սկզբից ի վեր թողեցին իրենց հին աշխատանքային «բույնը» եւ նոր մասնագիտություն ձեռք բերելով կամ հարմար գործ գտնելով փորձեցին հարմարվել ստեղծված պայմաններին: Մեկ այլ խավի համար փոփոխությունները ցանկալի էին, քանզի ազատեցին կաղապարից եւ ձեռներեցության համար բարենպաստ դաշտ ստեղծեցին: Այսուհետեւ էլ աշխատանք փնտրելու մեկնեցին Ռուսաստան: ոմանք տեղափոխվեցին ընտանյոք հանդերձ, ոմանք առանց ընտանիքի, անհրաժեշտ գումարը հեռվից առաքելու պայմանով: Սակայն շատերը «մոռացան» իրենց ընտանիքներ

նաբնակ կամ տեղացի ազգականներից, հարազատ կամ կնոջ ծնողներից նյութական կախում ունենալը: Սա մի բարդույթ է (որ կարող ենք անվանել եւ ինքնասիրություն), երբ (ո) իշխանության ու իրավունքների սահմանափակման ենթագիտակցական վտանգն ես զգում: Ինչեւէ, գործազրկությունը դարձավ ընտանեկան վեճերի հիմնական պատճառ: Նման իրավիճակներում մեծ է կանանց նրբանկատության արժեքը, քանզի շատ ամուսնալուծությունների պատճառը հենց կանանց ամուսինների անօգնականությունը «երեսով տալն» է: Թեպետ հայ ընտանիքների փոքր տոկոսն է ի սկզբանե կառուցված իրավահավասարության հիմքի վրա, սակայն կանայք պետք է հիշեն, որ ամեն դեպքում ճիշտ չէ լոկ պահանջողի դերում հանդես գալը փոխանակ սեփական ներդրումն ունենալու ընտանեկան բյուջեի համալրման գործում:

Ի դեպ, հանրահայտ է եւս մի փաստ. Հայաստանում այսօր ավելի հետաքրքիր է աշխատանքով ապահովել կանանց, քան տղամարդկանց: Բոլոր այն հաստատություններում, որոնք այսօր եկամտաբեր ու տարածված են, հիմնականում կին աշխատակիցների պահանջարկ կա (ինչի խաղաստուն, սրճարան, ռեստորան կամ որեւէ գրասենյակ: Այնպես որ, հակառակ տարբերակը, երբ կինն է ընտանիքի եկամտի աղբյուրը, եւս պիտի դիտարկենք: Այս տարբերակը նույնպես ընտանեկան վիճաբանությունների է հանգեցնում, թեպետ ամուսնալուծվելու հարցում, ըստ դասական վիճակագրության, քանակապես վճռորոշ արժեք չի կազմում: Պարզապես նման իրավիճակներում, երբ կինը բարձր աշխատավարձ է ստանում, տրամաբանորեն նաեւ ստանձնում է ընտանեկան բյուջեի տնօրինման դեկը, ինչն ավելի ցածր աշխատավարձ ստացող կամ գործազուրկ ամուսնուն մեծամասամբ անձնական վիրավորանք է թվում:

Այժմ համեմատաբար պակաս չափով, սակայն վերջին տարիներին մեծ տարածում էին գտել վաղ ամուսնությունները, ինչի արմատները կրկին սոցիալական էին: Ֆինանսապես դժվարությամբ գոյատեւող ընտանիքներում, ուր ծնողները հազիվ էին ծայրը ծայրին հասցնում, 15-18 տարեկան աղջիկները դպրոցական կամ նորավարտ, նյութական նեղություններից հոգնած ձգտում էին արագորեն ամուսնանալ. ընդ որում, ցանկալի էր, որ ընտրյալը լիներ տարիքային առումով հասուն, կյանքում ինքնահաստատված ու նյութապես ապահով: Նման ամուսնությունների միտումն այժմ փոքր-ինչ նվազել է. այսօր ավելի հիշ ենք բախվում դեպքերի, երբ 15-16-ամյա աղջիկները, հաճախ ծնողների լռելյայն համաձայնությամբ, «փախչում» են ընտրած տղայի տուն:

Փոքր-ինչ շեղվելով նկատենք թե ամուսնությունների, թե ամուսնալուծությունների ճշգրիտ վիճակագրական պատկերը դժվար է վերականգնել նաեւ այն պատճառով, որ դրանց մեծ մասը պատշաճաբար գրանցված չէ, իսկ վերաբերմունքն այդ արարողությունների հանդեպ դարձել է բավականին անփույթ ու անկաշկանդ: Թե ամուսնությունների, թե բաժանությունները (դատարան դիմելու դեպքում) որոշակի գումարների հետ են կապված:

Վաղ ամուսնությունների զգալի մասն, ըստ նույն դասական վիճակագրության տվյալների, կարճատեւ ընթացք է ունենում: Պատճառները տարբեր են՝ զգացմունքային, կենցաղային կամ այլ բնույթի: Այս պահին խոսքը վերաբերում է հասակակից երիտասարդների ամուսնությանը: 18-19 տարեկան տղան, իր ընտանիքը կազմելով, հազվադեպ է պատրաստ լինում վերջինի հոգսերը հոգալու փաստորեն մնալով ծնողների հույսին: Ինքնուրույնության ձգտող երիտասարդների համար տան «երեխայի» կախյալ վիճակը հաճախ անտանելի է դառնում. ավագներից ստացած նյութական օգնությունն այս կամ այն կերպ ենթադրում է եւ պարելակերպի ու օրենքների ընդունման պարտադրանք: Նորաստեղծ ընտանիքը հայտնվում է հակասական դրության մեջ. մի կողմից նրան ճնշում են սերունդների մտածողության տարբերությունները, մյուս կողմից նյութական անօգնականությունը: Նման իրավիճակներից դուրս գալու փորձերը հանգեցնում են այլ բարդությունների: Հաճախ նորաստեղծ ընտանիքներն առանձնանում են սեփական հարկի տակ պարելու, սակայն, անփորձ լինելով, չեն կարողանում դիմակայել դժվարություններին: Հաճախ էլ շարունակում են պարել ծնողների հետ միեւնույն հարկի տակ, սակայն երկու դեպքում էլ ընտանեկան վիճաբանությունները հանգեցնում են զգալի քանակությամբ ամուսնալուծությունների. մի դեպքում ամուսինների միջեւ, երկրորդ դեպքում ծնողների հետ բախումների պատճառով:

Սոցիալական ոչ բարվոք պայմանները նպաստել են եւ «հաշվարկային» ամուսնությունների աճին, ընդ որում հաշվարկները ոչ միայն նյութական, այլեւ ամենատարբեր կարգի են: Նման զույգերի ամուսնալուծություններն, այնուամենայնիվ, տարերային չեն անվանի: Հաշվարկը հասակ ու «տինդ» հասկացություն է, եւ հաշվարկի քաղաքականությունից թեկուզ մեկ անգամ օգտվողը մինչեւ վերջ ակամա հավատարիմ է մնում պարելու այդ ձեւին: Պարզապես նյութական հաշվարկի հիման վրա կնքված ընտանիքները մեծ մասամբ, ի վերջո, մնում են անհաջող, թեպետ կարող են եւ չփլուզվել:

ԱՆՈՒՇ ԲԱԲԱՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

ՄՐՑՈՒԿԱՅԻՆ ՃԵՆՔ

«Սառը պատերազմի» գաղտնի զինանոցները

ԱՄՆ-ը դեկտեմբերին, հավանաբար, հայտարարություն կանի ՆԱՏՕ-ի անդամ եվրոպական երկրներում դեռևս մնացած իր միջուկային ռումբերը դուրս բերելու մասին: Համենայն դեպս, դա են ակնկալում Բրյուսելում գտնվող ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում: Ճիշտ է, «սառը պատերազմի» ավարտից հետո ամերիկացիները շոշափելիորեն կրճատեցին իրենց զինանոցները, բայց այժմ արդեն հայտնի է, որ 1950-60-ական թթ. նրանք հազարավոր միջուկային հրթիռներ են տեղաբաշխել դաշնակից երկրներում, որոնց մի մասը դեռ մնում է այնտեղ: Ըստ որում, ինչպես նշում է ամերիկյան «The Bulletin of the Atomic Scientists» ազդեցիկ տեղեկագիրը, միշտ չէ, որ ԱՄՆ-ը դաշնակիցներին հայտնել է դրանց տեղաբաշխման մասին:

Տեղեկագրի վերջին համարում զետեղված է ամերիկացի փորձագետներ Ռոբերտ Նորիսի, Ուիլյամ Արկինի եւ Ուիլյամ Բուրի հետազոտությունը, որոնք կարողացել են օգտվել նորաբաց գաղտնի արխիվներից: Հեղինակները նշում են, որ ասիական եւ եվրոպական 18 պետություններում, ինչպես նաեւ ԱՄՆ-ի խաղաղօվկիանոսյան տիրույթներում ամերիկացիները 27 միջուկային զինանոց են ունեցել:

Ասիական երկրներից առանձնանում էին ԱՄՆ-ի դաշնակիցներ Տայվանը, Ֆիլիպինները եւ Հարավային Կորեան: Եվրոպայում նման զինանոցներ կային Հյուսիսատլանտյան դաշինքի երկրներում, ինչպես նաեւ Ֆրանսիայի նախկին խնամարկյալ տարածք Մարոկկոյում, նշում են ամերիկացի երեք փորձագետները:

Միջուկային մարտագլխիկներն ԱՄՆ-ի տարածից առաջին անգամ դուրս բերվեցին 1951 թ. տեղաբաշխվելով Գուամ կղզում: 1954 թ. միջուկային զինանոցներ ստեղծվեցին Մեծ Բրիտանիայում եւ Մարոկկոյում, ապա Արեւմտյան Գերմանիայում, Իտալիայում, Թուրքիայում, Հոլանդիայում, Հունաստանում, Բելգիայում, Ֆրանսիայում: Վերջին երկրում այդ զինանոցները փակվեցին 1966 թ. ՆԱՏՕ-ի ռազմակայանների փակման հետ միաժամանակ:

Վերոհիշյալ 18 պետությունները որքանո՞վ էին տեղյակ ամերիկացիների գործողություններին: «Էքսպրես» հանդեսի տեղեկատվության համաձայն, ՆԱՏՕ-ի անդամ պետությունների բարձրաստիճան պաշտոնյաներին տրամադրվել է այդ պետությունների տարածքում պահեստավորված ամերիկյան զենքերի լիակատար ցանկը: Սակայն ամերիկացի երեք փորձագետների հետազոտությունից պարզվում է, որ եղել են նաեւ գաղտնի ֆայլեր: Այսպես, Կեֆլավիկի (Իսլանդիա) ամերիկյան ռազմակայանում եղել են միջուկային զենքի բաղադրամասեր, մինչդեռ Իսլանդիան հայտնի էր որպես միջուկազերծ երկիր:

Ի դեպ, Մարոկկոյում միջուկային զենքի տեղաբաշխմանը վերաբերող տվյալները զարմանք են պատճառել նույնիսկ ֆրանսիացի մասնագետներին: Նրանք պրոտեստներ են կատարել ֆրանսիական արխիվներում, բայց առայժմ նման գործարքի որեւէ հետք չի հայտնաբերվել: Ենթադրվում է, որ կամ խնամարկյալ տարածքում զենքի պահեստավորումը կատարվել է առանց Ֆրանսիայի գիտության, կամ էլ եղել են ինչ-ինչ անկատար ծրագրեր:

Ամերիկացիների միջուկային գաղտնի զինապահեստների բացահայտումը վկայում է, որ 1950-60-ական թթ. ԱՄՆ-ը միջուկային զենքի կիրառման այնպիսի հայեցակարգ է ունեցել, որը հիմնվում էր պահեստավորված զենքերի լիակատար ցանկը փոխհատուցելու համար: Այլ կերպ ասած, ամերիկացիները մտադրվել էին ԽՍՀՄ-ի սովորական զինատեսակներին պատասխանել միջուկային զենքով:

Կուբայի 1962 թ. ճգնաժամից հետո, երբ ԱՄՆ-ի տարածքը խոցելի դարձավ խորհրդային հրթիռների համար, ամերիկացիները փոխեցին իրենց ռազմավարությունը: Ներկայումս նրանք միջուկային պատերազմը համարում են մարտական գործողությունների վերջնական փուլ, որին անհրաժեշտաբար պետք է նախորդի սովորական զինատեսակներով մղվող ցամաքային պատերազմ:

ԱՄՆ-ի նոր ռազմավարությունն ավելորդ դարձրեց աշխարհի տարբեր երկրներում տեղաբաշխված մարտավարական միջուկային հրթիռների գոյությունը, ուստի 1960-ական թթ. վերջերին եւ 1970-ական թթ. սկզբներին ամերիկացիները դուրս բերեցին դրանց մեծ մասը, փոխարենը տեղաբաշխելով օդային նրբահնար միջուկային սարքեր եւ դրանց վրա կառուցելով ահաբեկման իրենց հաղթականությունը:

Պ. Ք.

«Շթազիի» քարտարանը կվերադարձվի Գերմանիային

Մոտ ժամանակներս կրկին աշխույժ բանավեճեր կծավալվեն նախկին ԳԴՀ-ի պատմության մոայլ էջերից մեկը կազմող լրտեսական ծառայության՝ «Շթազիի» առնչությամբ: Բանն այն է, որ երկարատեւ ձգձգումներից հետո ԱՄՆ-ի կառավարությունը հայտարարել է, թե պատրաստ է Գերմանիայի ներքին գործերի նախարարությանը հանձնել նախկին ԳԴՀ գաղտնի ոստիկանության քարտարանը: Վերջինս ամփոփում է շուրջ 300 հազար անձանց անուններ: Դրանք «Շթազիի» զոհերի եւ իրազեկիչների գործերն են: Ինչպես տեղեկացնում է «Պուբլիկ» հանդեսը, քարտարանի պարունակությունը գրանցվելու է լազերային սկավառակների վրա, եւ եկող տարվա սկզբից ԿՀՎ-ի հատուկ սուրհանդակները դրանք մաս-մաս հասցնելու են Գերմանիա:

Հայտնի չէ, թե նախկին ԳԴՀ-ի հոգեվարքի պահին՝ 1990 թ. ամերիկացիներն ինչպես են ձեռք բերել «Շթազիի» կարեւոր վավերագրերը: Ամենահավանական վարկածն այն է, թե Մոսկվայում՝ ՊԱԿ-ի արխիվներում եղած այդ քարտարանը պատճենահանվել է եւ վաճառվել ամերիկյան գաղտնի ծառայություններին:

Գերմանիայի վերամիավորումից հետո «Շթազիի» արխիվների մշակման նպատակով ստեղծված «Գաուկի հանձնաժողովի» անդամներն անչափ դժգոհ են ԱՄՆ-ի կառավարության որոշումից: Բանն այն է, որ մինչեւ օրս նրանց հայտնի են «Շթազիի» գործակալների միայն ծածկանունները, մինչդեռ լազերային սկավառակներն ստանալուց հետո իրենք կկարողանան բացահայտել շուրջ 1900 իրազեկիչների իսկական անունները:

Այդուհանդերձ, միշտ հավանական է թվում քարտարանի պատճառով Գերմանիայի հասարակության աղակայունացումը, այն էլ՝ վերամիավորումից 10 տարի անց: Հանձնաժողովի տնօրեն Պետեր Բուսսեն նշում է, որ «Շթազիի» գործակալներից շատերն արդեն ձերբակալված են, ուստի քարտարանի տվյալների հրապարակումը դժվար թե դատական լուրջ հետեւանքներ ունենա: Հավանական չի համարում նաեւ նշանավոր քաղաքական դեմքերի մերկացումը, քանի որ ժամանակին բազմաթիվ գործեր ոչնչացվել են հենց «Շթազիի» գործակալների կողմից:

Ըստ էության, Գերմանիային հանձնվելիք վավերագրերը լոկ կդյուրացնեն պատմաբանների աշխատանքը, նրանց կօգնեն ավելի լավ պատկերացնելու «Շթազիի» աշխատանքի մեթոդները, նախկին ԳԴՀ-ի հասարակության վրա նրա ազդեցության ծավալները: Կարեւորն այն է, որ վերջին բանավեճ կծավալվի Արեւելյան Գերմանիայի պատմության շուրջը եւ բազմաթիվ նոր հակափաստարկներ կներկայացվեն տարակարծիք վարչակարգի քաջագովներին:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Պեղման հավանություն տվեց Ստամբուլի գագաթաժողովի արդյունքներին

Անպատեհ համարելով Չեչնիայի վերաբերյալ առաջարկությունները

ՄՈՍԿՎԱ, 1 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՍՆԱՐՔ: ՈԴ Պեղման նոյեմբերի 30-ին հայտարարություն է ընդունել «ԵԱՀԿ անդամ պետությունների ղեկավարների եւ վարչապետների միջեւ Ստամբուլում կայացած հանդիպման արդյունքների մասին», որում վերոհիշյալ հանդիպումը գնահատվում է որպես «կարեւոր քայլ՝ եվրոպական մայրցամաքում ընդհանուր, համապարփակ, անբաժանելի եւ բոլորի համար հավասար անվտանգության համակարգի ձեւավորմանը նպաստելու գործում»: Պատգամավորներն ընդգծում են, որ համաեվրոպական գործընթացի հաջողության համար կարեւոր պայման է ցանկացած պետության ներքին գործերին չմիջամտելու եւ ուժ չգործադրելու սկզբունքների պահպանումը: Հայտարարության մեջ շեշտվում է նաեւ Ստամբուլում ընդունված փաստաթղթերի կարեւորությունը: Դրա հետ մեկտեղ պատգամավորներն «անպատեհ» են համարում Չեչնիայի իրավիճակի կարգավորման գործում ԵԱՀԿ միջնորդության վերաբերյալ զանազան առաջարկությունները: Փաստաթղթում ընդգծվում է, որ Ռուսաստանը պատրաստ է համագործակցել ԵԱՀԿ հետ այն հարցերում, որոնք առնչվում են ազատագրված տարածքում գտնվող եւ Չեչնիայից հեռանալ պարտադրված մարդկանց օգնություն ցույց տալուն:

Ռազմական կառույցներ Եվրամիության շրջանակներում

ՓԱՐԻԶ, 1 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ֆրանսիան, Գերմանիան, Մեծ Բրիտանիան եւ Իտալիան ընդունել են փաստաթուղթ Եվրամիության ներսում ռազմական կառույցների ստեղծման մասին: Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի, այս մասին երեքշաբթի օրը հաղորդվել է Փարիզում տեղի ունեցած Ֆրանս-գերմանական գագաթաժողովի շրջանակներում: Այս փաստաթուղթը կհանձնվի Հելսինկի, որտեղ մոտ ժամանակներս կկայանա Եվրամիության երկրների ղեկավարների հանդիպում:

Ինչպես հայտնել են Ելիսեյան պալատի աղբյուրները, Փարիզի, Լոնդոնի, Բեռլինի եւ Հռոմի կողմից մշակված փաստաթուղթը վերաբերում է Եվրամիության սեփական ռազմական ներուժի զարգացմանը, «որոշումներ կայացնող մարմինների եւ ռազմական գործիակազմի» կազմավորմանը:

Այս տարրերն անհրաժեշտ են, որպեսզի Եվրամիությունն ինքնավարություն ունենա որոշումներ կայացնելիս եւ կարողանա սեփական ռազմական գործողություններ իրականացնել այն դեպքում, եթե ՆԱՏՕ-ն գործի չդրվի, նշվել է Ֆրանս-գերմանական գագաթաժողովի ժամանակ:

«Թուրքիայի դիրքորոշումը խարխլում է Եվրոպա մտնելու նրա հեռանկարները»

ԱԹԵՆՔ, 1 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՌ-ՏԱՍՍ: Թուրքիայի դիրքորոշումը խարխլում է Եվրոպա մուտք գործելու նրա հեռանկարները, այսպես հայտարարել է Հունաստանի կառավարության պատասխանատու ներկայացուցիչ Դիմիտրիս Ռեպասը: Այս արտահայտությամբ նա մեկնաբանել է Թուրքիայի վարչապետ Բյուլենթ Էջեւիթի կողմից երկուշաբթի օրն արված այն հայտարարությունը, թե Անկարան «ոչ մի զիջում» չի անի Հունաստանին Կիպրոսի հիմնախնդրի եւ Եգեյան ծովի շուրջ վեճերում լոկ հանուն այն բանի, որպեսզի կանխավ աղահովի Աթենքի համաձայնությունը Եվրամիության ղեկտեմբերին Հելսինկիում կայանալիք գագաթաժողովում Թուրքիային Միությանն անդամակցելու թեկնածու երկրի կարգավիճակ տրամադրելու համար: «Թուրքիային չեն խնդրում որեւէ զիջում անել: Նրան խնդրում են հարգել միջազգային իրավունքն ու միջազգային պայմանագրերը», մատնանշել է Դիմիտրիս Ռեպասը: Նրա խոսքերով, այն բանները, թե Աթենքը Հելսինկիում կողմնակցի Եվրամիությանն անդամագրվելու Թուրքիայի ձգտումը, ներկայումս հարաբերում են «50-ը 50-ին», եւ ամեն ինչ կախված կլինի այժմ տեղի ունեցող բանակցային գործընթացից:

Չեչնիայի ԱԳ նախարարը ելույթ է ունեցել Ֆրանսիայի Ազգային ժողովի հանձնաժողովի առջեւ

ՓԱՐԻԶ, 1 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Չեչնիայի արտգործնախարար Իլյաս Սիմադովը երեքշաբթի օրը ելույթ է ունեցել Ֆրանսիայի խորհրդարանի Ազգային ժողովի ստորին պալատի արտաքին գործերի հանձնաժողովի անդամների առջեւ: Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման, Իլյաս Սիմադովը մասնավորապես նշել է, որ «հանրապետության իրավիճակը մնում է «շատ վատ»: Ստամբուլում կայացած ԵԱՀԿ-ի գագաթաժողովից հետո Չեչնիայում մարտերը միայն սաստկացել են: Նրա ասելով, յուրաքանչյուր օրը բերում է հազարավոր գաղթականներ ու հարյուրավոր տղանվածներ: «Մենք ակնկալում ենք, որ միջազգային հանրակցությունը կթեթեւացնի բնակչության տանջանքները, ասել է Իլյաս Սիմադովը: Իմ ելույթն Ազգային ժողովի հանձնաժողովի առջեւ հետաքրքրում է հենց այդ նպատակը»: Փարիզից հետո Իլյաս Սիմադովը մտադիր է մեկնել Ստրասբուրգ՝ Եվրախորհրդարան, Բելգիա, Իտալիա, Գերմանիա եւ Մեծ Բրիտանիա, իսկ այնուհետեւ, դեկտեմբերի 15-ից հետո՝ Միացյալ Նահանգներ:

Թալիբների ղեկավարը Կոֆի Անանից ներողություն է պահանջել

ԱԲՈՒ ԴԱԲԻ, 1 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՌ-ՏԱՍՍ: «Թալիբան» շարժման պարագլուխ մոլլա Մոհամադ Օմարը ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Կոֆի Անանից ներողություն է պահանջել նրա կողմից Նյու Յորքում Աֆղանստանի դրության մասին ՄԱԿ-ի զեկուցագիր ներկայացնելու համար: «Մենք անհապաղ ներողություն ենք պահանջում, այլապես ստիպված կլինենք հավաքել երկրում աշխատող ՄԱԿ-ի ասպիճանավորներին եւ նրանց տանել ռազմաճակատի գիծ, որպեսզի նրանք համոզվեն մարտիկների մեջ դեռահասների բացակայության հարցում», հայտարարել է թալիբների պարագլուխը Ղանդահարում: ՄԱԿ-ի այն պնդումները, թե 14-ամյա աֆղանները ներգրավվում են զինվորական ծառայության մեջ, չեն համապատասխանում իրականությանը, հավաստել է Մոհամադ Օմարը: Նրա խոսքերով, Կոֆի Անանի զեկուցագիրը կանխակալ բնույթ է կրում եւ միջամտություն է Աֆղանստանի ներքին գործերին այն մասով, որը վերաբերում է մահմեդական քարտերին եւ աֆղանների սովորույթներին, որոնցում ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը մարդու իրավունքների խիստ խախտում է նկատել:

digitised by A.R.A.R.@

Լեւոն Ներսիսյան երեւույթը

Հենրիկ Էդոյանը այն մարդկանցից է, որ կարող է խոսել Լեւոն Ներսիսյանի մասին, առավել եւս, որ տարիներ շարունակ նրանք աշխատել են միասին՝ Երեւանի պետական համալսարանի արտասահմանյան գրականության ամբիոնում, բավականին մտերիմ են եղել:

Լսոսել Լեւոն Ներսիսյանի մասին նշանակում է խոսել 1960-90-ական թվականների հայ մշակույթի եւ մասնավորապես հայ արվեստի մեջ հին պատնեշների հաղթահարման եւ նորի ու արդիականի սկզբնավորման ու զարգացման կենտրոնական դեմքերից մեկի մասին: Երեւանի պետական համալսարանում եւ համալսարանից դուրս նրա կարդացած հրապարակային դասախոսությունները, երբ լսարաններում եւ դահլիճներում հավաքվում էր հսկա բազմություն լսելու նրան, վայելելու նրա մտքի եւ իսկական արհեստի բերկրանքը, կազմված էին միջազգային մշակույթի արդիական հարցերի հետ, ներկայացնում էին այն նորը, առաջադիմականը, որը դեռեւս անծանոթ էր մեր հասարակությանը: Նա կրթում եւ դաստիարակում էր սերունդներին, նրա խոսքի մոգական ազդեցության ոլորտում ձեւավորվում էր մեր արվեստի, մասնավորապես գրականության, կերպարվեստի, կինոարվեստի հիմնական ուղենիշը, այն է՝ լինել արդիական, գտնվել միջազգային մտքի բարձրագույն մակարդակի վրա, ազատվել մարդկային ոգին կաշկանդող բոլոր հնացած կաղապարներից: Արվեստը, ինչպես սովորեցնում էր Լեւոն Ներսիսյանը, կարող է ապրել եւ շնչել միայն ազատության մեջ, իսկ դրա համար արվեստագետն ինքը պետք է լինի ազատ եւ անկաշկանդ, ունենա ինքնուրույն պատկերացում ժամանակակից աշխարհի մասին:

Լեւոն Ներսիսյանը Վահրամի դերում («Ապրիլ»):

Լեւոն Ներսիսյանը 1957 թ.-ից Երեւանի պետական համալսարանում դասավանդում էր արտասահմանյան գրականության պատմություն, անտիկ գրականություն, բազմաթիվ հատուկ դասընթացներ, որոնցից կարելի է հիշել «20-րդ դարի ֆրանսիական պոեզիան», «Ալբեր Քամյուն եւ էկզիստենցիալիզմի փիլիսոփայությունը», «Աբսուրդի թատրոնը», «Արեւմտաեվրոպական ինքնատության պատմություն»: Նա առաջինն էր, որ համալսարանական ծրագրերի մեջ մտցրեց 20-րդ դարի արեւմտաեվրոպական նշանավոր հեղինակներին, որոնք խորհրդային գաղափարախոսության պատճառով մնացել էին «կարմիր գծից անդին»: Առանձնապես տպավորիչ էին նրա դասախոսությունները Ալբեր Քամյուի ստեղծագործությունների մասին, որին նա համարում էր եվրոպական մեծ գրականության «վերջին մոհիկանը»: Լեւոն Ներսիսյանն առաջին դասախոսն էր, որ մանրակրկիտ ներկայացրեց եւ մեկնաբանեց Արթուր Ադամովի թատրոնը, որին է Իոնեսկուի հետ միասին համարում էր «Աբսուրդի թատրոնի» հիմնադիրը: Կերպարվեստի հայ գործիչները, որոնք առանձին սիրով էին կապված իրենց ընկերոջ, բարեկամների, բոլորը, ովքեր բախտ էին ունեցել ծփվել նրա մեծ հոգու եւ անսպառ մտքի հետ: Նրան հանդիպելուց, նրան լսելուց հետո առրել նախկինի պես, այլեւս անհնար էր: Նա այնպիսի բացառիկ անհատներից էր, որոնք հեղաշրջում են առաջացնում իրենց հետ ծփվող մարդկանց հոգում: Թեեւ նա ոչինչ չգրեց, բայց նրա ներկայությունն զգացվում է 1960-90-ական թվականների հայ գեղարվեստի աշխարհում: Այդ ժամանակաշրջանը, այսպես ասած, նոր արվեստի «ոսկեդարը», ըստ էության, կարող է կոչվել Լեւոն Ներսիսյանի անունով: Նա այդ անունի ոչ միայն ներքին ֆոնն էր, այլեւ հիմքը, այն մտավոր անկյունաքարը, որի վրա կառուցվում է մշակութային շենքը:

Նա գեղարվեստական ճաշակի օրենսդիրն էր, արվեստի ընկալման եւ գնահատման ամենաբարձր չափանիշը, որը, ի վերջո, անհրաժեշտ է յուրաքանչյուր հասարակության «էլիտար» համակարգին: Նրանից բխում էին ստեղծագործական այնպիսի ուժեղ ազդակներ, որոնք իրենց անմիջական արձագանքն էին գտնում նրան շրջապատող արվեստագետների հոգու եւ մտքի մեջ: Լեւոն Ներսիսյանը մարդկային մի խոր կերպար էր, մեծ եւ չգրված գրքի հերոս, որը ոչ միայն ընդհանրացնում էր իր ժամանակը, այլեւ հսկում եւ խրախուսում էր մեր արվեստի բոլոր ճիգերն ու որոնումները:

Լինելով եվրոպական մշակույթի մասնագետ եւ սիրահար, նա դարձավ «գեղագիտական այլախոհ», որի հայացքները չէին կարող համընկնել տիրող գաղափարախոսական ուղղության հետ: Նա սկզբունքորեն չգնաց որեւէ փոխզիջման, չնահանջեց իր դիրքերից բարկացնելով ժամանակի «գաղափարական ղեկավարներին»: Իր ասկետիկ կյանքով ու կենցաղով, իր հոգու բացառիկ էությամբ, զգացմունքների մաքրությամբ ու խորությամբ, «ինտելեկտուալ փայլով» նա դարձավ հենարան Հայաստանի իսկական մտավորականության համար, այն կայմը, առանց որի ոչ մի նավ չի կարող դուրս գալ բաց ծով: 1960-ականների սերունդը մեծ պարտք ունի Լեւոն Ներսիսյանի՝ իր մեծ Ուսուցչի եւ Հոգեւոր հոր հանդեպ:

ՀԵՆՐԻԿ ԷԴՈՅԱՆ

«Ցերեկային գեղեցկուհին»
Ֆրանսիական ֆիլմերի օրեր

Երեւանում ֆրանսիական մշակույթի օրերի անցնող մեկամսյակը կեզրափակվի դեկտեմբերի 4-11-ը կայանալիք «Ֆրանսիական ֆիլմերի օրերով»: «Կինը ֆրանսիական կինոյում» վերնագրի տակ «Մոսկվա» կինոթատրոնում կցուցադրվեն Լուի Բենյուելի, Ժակ Բեքերի, Բերտրան Տավերնիեի եւ այլոց 8 ֆիլմերը:



«Ֆրանսիական ֆիլմերի օրերը», որ արդեն հերթական բնույթ են կրում, կազմակերպել է Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատունը Ֆրանսիայի արտգործնախարարության կինոյի բաժնի եւ հայաստանյան «Պարադիզ» ընկերության մասնակցությամբ: Ֆիլմերի ցուցադրումը նախատեսվում է թե հայերենով, թե ֆրանսերենով ի շնորհ տեղի ֆրանկոֆոն հասարակությանը: Վերջինիս մասին խոսելիս, ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպան Միշել Լեգրան անդրադարձավ նախորդ միջոցառումներին եւս: Այսպես, ֆրանսիական գրքերի վաճառքը նա համարեց աննախադեպ հաջողություն: «Շաստրեն են Հայաստանում խոսում լավ ֆրանսերենով»: Խոսեց նաեւ մոդեռն բալետի «Սենք այնքան հանգիստ էինք» ներկայացման մասին, որ Տուրի պարային անսամբլը բեմադրեց մեր օպերային թատրոնի բեմում: Ըստ պրն Լեգրայի, դա տեղի հասարակայնության համար հայտնագործություն էր: Այնպես որ, հետաքրքրվածությունը հաշվի առնելով, բոլոր վերոհիշյալ բնագավառներում, ինչպես նաեւ նկարչությունում, ֆրանսիացիները նախատեսում են Հայաստանում իրենց մշակույթի հետ ծանոթագրական գործն ավանդական դարձնել:

Վերադառնալով ֆիլմերին պրն դեսպանն ամփոփեց դրանք հետեւյալ կերպ. «Բացի բուն ֆիլմերից, դուք կտեսնեք նաեւ Ֆրանսիայի վերջին 50 տարիների ամենագեղեցիկ կանանց»: «Սեւերին բժշկի երիտասարդ, փխրուն եւ չբավարարված կինը, ազատություն է տալիս իրեն հետաքրքրող պատրանքներին: Նա սկսում է օրական մի քանի ժամ աշխատել տկն Անահիտ հասարակաց տանը: Հիշողությունները, պատրանքները եւ խորհրդավորի հետ նուրբ խաղը ստեղծում են կնոջ մի տարօրինակ կերպար»: Բայց հնարավոր չէ համառոտել Բենյուելի «Ցերեկային գեղեցկուհին» հատկապես մեծ էկրանով այն դիտելու հնարավորության հետ համեմատ:

ԼԻԼԻԹ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԿԱՐԻԵՐԱ

Ամենահաղթակիրթ ճանապարհը

ԵՐԵՎԱՆ, 1 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Երեւանի ամերիկյան համալսարանի շրջանավարտների ճնշող մեծամասնությունը՝ 93-95 տոկոսը, ինչպես ասաց համալսարանին կից գործող կարիերայի եւ շրջանավարտների հետ տարվող աշխատանքի կենտրոնի համակարգող Նարինե Կարինյանը, հետաքրքրությամբ է աշխատանք գտնում: Նրա ասելով, համալսարանը մեծապես նպաստում է դրան: Մասնավորապես յուրաքանչյուր տարի անցկացվում է, այսպես կոչված, կարիերայի օր, երբ շրջանավարտներն ու հնարավոր գործատուները հանդիպում են, եւ, պահանջարկի ու առաջարկի համապատասխանության դեպքում, գործատուն գտնում է բարձր որակավորման աշխատող, իսկ շրջանավարտները՝ իրենց մասնագիտությանը համապատասխան աշխատանք:

Դեկտեմբերի 1-ին ամերիկյան համալսարանում մոտ 150 շրջանավարտներ հնարավորություն ունեցան լուծելու իրենց «կարիերայի խնդիրները»: Գործազրկության ներկա պայմաններում, բնականաբար, որքան էլ շատ են առաջարկվող բարձր որակավորման մասնագետները, պահանջարկը ցածր է: Հերթական կարիերայի օրվան ներկա էին 12 գործատու կազմակերպություններ՝ հիմնականում միջազգային կազմակերպություններ, որոնք իրականացնում են զարգացման ծրագրեր:

Գործատուների մի մասը նշում էր, որ ներկա պահին ազատ աշխատատեղ չունի, սակայն նախատեսում է, որ մոտ ապագայում կլինի: Օրինակ, ամերիկյան դեսպանատան ներկայացուցիչը հավաքեց ցանկացողների տվյալները՝ ընտրություն կատարելու նպատակով: Հիմնականում կարելի է ասել, որ բոլոր ներկա կազմակերպություններն ի գիտություն ընդունեցին շրջանավարտների տվյալները, դրանց հետագայում անդրադառնալու խոստումներով: Համալսարանի փոխտնօրեն Անահիտ Օրդյանի խոսքերով, եթե կարիերայի օրվա շնորհիվ անգամ 5 շրջանավարտ գտնի իր մասնագիտությամբ աշխատատեղ, դա արդեն կարելի է համարել նորմալ չափանիշ՝ նկատի ունենալով ներկայիս գործազրկության բարձր մակարդակը:

Գորգի վրա նորածին տղա է պառկել

Այսօր գորգագործությունը դժվար վիճակում է: Սակավ են այն գյուղերը, որոնցում պահպանվել են գորգագործության ավանդները: Եղել են շրջաններ, որոնք գորգագործության կենտրոններ էին, սակայն առավել տարածվածներն արցախյան գորգերն են եղել: Քիչ-քիչ մոռացության են մատնվում այն ավանդները, որոնք գոյություն են ունեցել. նախկինում գորգը գործվել է ոչ միայն որպես տան հարդարանք, ծածկոց, այլեւ խորհրդանշել է կենսասիրություն եւ երջանկություն: Նոր գորգ գործելուց հետո, եթե այն նվիրվել է նորապսակներին, վրան տղա երեխա են պառկեցրել՝ որպես պտղաբերության խորհրդանիշ: Առավել հետաքրքրական է եղել գորգի թել կապելու ծիսակատարությունը, որի ընթացքում ծուն կոտրելով դազգահի վրա՝ բարեմաղթություններ են ասել՝ խափանելու համար չարը:

Եվ ահա այս հին ավանդույթները վերածնելու համար ժողովրդական ստեղծագործող, գորգագործ Շուշան Պողոսյանն իր արվեստանոցում ցուցադրեց իր հինգ աշխատանքները. նախքան գորգ գործելը նա ուսումնասիրել է մեր պատմությունն ու ճարտարապետությունը, որից էլ վերցրել է առանձին զարդանախշեր՝ նուռ, խաղող, ցորեն, իսկ պատմությունից՝ գրերի գյուտը, քրիստոնեության ընդունումը, եղեռնը եւ այլն:

Ազգագրագետ Ժաննա Խուրշուդյանն իր խոսքում նշեց, որ գորգն իր պատմությունն սկսել է դեռեւս մեր թվագրությունից առաջ՝ որպես արհեստ, սակայն այն զարգանալով վեր է ածվել արվեստի, որովհետեւ այն իր մեջ ամփոփում է ե՛ւ պատմություն, ե՛ւ գրականություն, ե՛ւ ճարտարապետություն: Հայկական գորգի յուրահատկությունը գունային նրբերանգներն են, երկրաչափական սիմետրիկ լուծումները, եւ պատահական չէ, որ թուրքմենական գորգերն առաջացել են հայկականից: Գորգը մեր մշակույթի տարածման լավագույն միջոցն է:

Շուշանը, որպես Հայաստան-Թուրքմենստան ընկերության անդամ, իր գորգերը ցուցադրել է նաեւ արտասահմանյան երկրների հետ բարեկամության ընկերությունում, Թումանյանի տուն-թանգարանում: Նա նաեւ «Գոյամարտ» համազգային ընկերության մշակութային անդամ է, որտեղ անվճար գորգագործություն է սովորեցնում հաշմանդամ եւ զոհված ազատամարտիկների երեխաներին:

ՕՖԵԼՅԱ ԲՈՅԱՐՅԱՆ

ՕՐՎԱԾՈՒՅՑ

Դեկտեմբերի 2

- 1814 թ. մահացել է ֆրանսիացի գրող, մարիզ Դոնասիեն դը Սադը: Նա բուռն, արկածալից կյանք է ունեցել: 30 տարի բանտերում է անցկացրել սեռական հոդի վրա կատարած սպանության պատճառով: Եվ շատ բնական է, որ իր արկածների հիման վրա նա հետագայում բազմաթիվ գրքեր է գրել, որոնք լի են սեռական այլանդակության, էրոտիկական մղձավանջային տեսիլքների եւ պաթոլոգիկ տարբեր վիճակների նկարագրություններով: Հենց նրա անունից է առաջացել «սադիզմ» հասկացությունը:
- 1823 թ. ԱՄՆ Կոնգրեսը հաստատել է Մոնրոյի վարդապետությունը, հռչակել է «Ամերիկան՝ ամերիկացիների համար» սկզբունքը, որով արգելվում է Ամերիկայի գաղութացումը եվրոպական տերությունների կողմից, ինչպես նաեւ օրինականացվել է աշխարհի բաժանումը եվրոպական եւ ամերիկյան համակարգերի:
- 1859 թ. ծնվել է ֆրանսիացի գեղանկարիչ ժորժ Սյորան: Նրա ողջ կյանքն անցել է կարիքի դեմ եւ հանուն ճանաչման պայքարում, բայց նա այդպես էլ մահացել է անհայտության մեջ:
- 1920 թ. ստորագրվել է Ալեքսանդրապոլի պայմանագիրը Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ: Հայկական պատվիրակությունը ստիպված էր ստորագրել այդ նվաստացուցիչ պայմանագիրը, ըստ որի Հայաստանի պատմական բոլոր տարածքներն անցան Թուրքիային, բացառությամբ Երեւանին եւ Սեւանա լճին հարող շրջանները (ընդամենը մոտ 10 հազար քառ. կմ): Վերոհիշյալ պայմանագիրն իր ուժը կորցրել է 1921 թ. կնքված Կարսի պայմանագրից հետո:
- 1925 թ. ծնվել է ռուս օպերային երգչուհի Իրինա Արխիպովան: Նա ստիպված էր ընտրություն կատարել իր մասնագիտության (ավարտել էր ճարտարապետական ինստիտուտը) եւ կոչումի միջեւ: Հաղթում է սերը երաժշտության հանդեպ եւ Արխիպովան ամբողջովին նվիրվում է մեծ թատրոնին:
- 1979 թ. մահացել է խորհրդային կոմպոզիտոր Վասիլի Սոլովյով-Սեդոյը: Նա խորհրդային երգարվեստի խոշորագույն ներկայացուցիչներից է:
- Այսօր հին հայկական տոմարով Տրէ ամսվա Հրանտ օրն է:

ՆԱԻՐԻ ԹԱՊԵՎՈՍՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մարզական

ՇԱԽՄԱՏ

Առաջատարների խմբում

Բաթումում ընթացող շախմատի Եվրոպայի թիմային առաջնությունում անցկացվեցին երկրորդ տուրի հանդիպումները: Այս անգամ եւս մեր երկու թիմերը հաղթեցին իրենց մրցակիցներին:

Տղամարդկանց հավաքականը մրցեց Լեհաստանի ընտրանու հետ եւ հաղթեց 2,5-1,5 հաշվով: Առաջին խաղատախտակի վրա մեր թիմի առաջատար Սմբատ Լպուտյանը սպիտակ խաղաքարերով պարտության մատնեց հայտնի շախմատիստ Միխայիլ Կրասենկովին: Մյուս հանդիպումներում, ըստ խաղատախտակների, գրանցվեցին այսպիսի արդյունքներ. Մինասյանը զիջեց Մայեթյային, Անաստասյանը հաղթեց Սոկին, իսկ Արոնյանի եւ Կեմոի պարտիան ավարտվեց խաղաղ արդյունքով:

Այժմ երկու տուրից հետո Հայաստանի խառյակը վաստակել է 6,5 միավոր եւ նույնքիսի արդյունք ունեցող Ուկրաինայի եւ Շվեյցարիայի հավաքականների հետ գլխավորում է մրցաշարային աղյուսակը: Հաջորդ տեղերում են Ռուսաստանի, Հունգարիայի եւ Լեհաստանի հավաքականները, որոնք 6-ական միավոր ունեն:

Կանանց մրցումներում մեր հանրապետության ներկայացուցիչները 1,5-0,5 հաշվով պարտության մատնեցին Շվեյցարիայի թիմին: Այստեղ հաղթական միավորը բերեց առաջատարը՝ Էլինա Դանիելյանը: Հայաստանի շախմատիստուհիները վաստակել են 3 միավոր եւ աղյուսակը գլխավորողների թվում են:

Վերջում նշենք, որ Եվրոպայի 12-րդ թիմային առաջնության տղամարդկանց եւ կանանց մրցաշարերում հանդես են գալիս 36-ական հավաքականներ: Մրցումներն անցկացվում են շվեյցարական խաղակարգով, 9 տուրով: Առայժմ առաջնության «սկզբնախաղն» է, եւ պարզ է, որ լարված պայքար է ընթանալու չեմպիոնի կոչման եւ մրցանակային տեղերի համար:

Միջմայրցամաքային գավաթը՝ «Մանչեսթր յունայթեդին»

Տոկիոյում անցկացվեց ֆուտբոլի Միջմայրցամաքային գավաթի 38-րդ խաղարկությունը (այն արդեն մի քանի տարի է, ինչ հայտնի է նաեւ «Տոյոտայի գավաթ» անվանմամբ): Պատվավոր մրցանակը վիճարկեցին եվրոպական երկրների Չեմպիոնների լիգայի հաղթող «Մանչեսթր յունայթեդը» (Անգլիա) եւ Հարավային Ամերիկայի ակումբային չեմպիոնը՝ «Լիբերտադորեսի» գավաթի հաղթող «Պալմեյրասը» (Բրազիլիա):

Ճապոնիայի մայրաքաղաքի Ազգային մարզադաշտում 43,5 հազար ֆուտբոլասերների ներկայությամբ անցկացված մրցախաղը չափազանց համառ ստացվեց եւ ի վերջո ավարտվեց «Մանչեսթր յունայթեդի» նվազագույն հաշվով հաղթանակով՝ 1-0: Միակ գոլը խփվեց 35-րդ րոպեին. անգլիացիների խաղացող Ռայան Գիգսը ծախ եզրով առաջ սլացավ, գնդակը փոխանցեց թիմի ավագ Ռոյ Քինին, որն էլ շաս մոտ տարածությունից գրավեց բրազիլացիների դարպասը: Հանուն ճշմարտության ասենք, որ ամբողջ խաղի ընթացքում ավելի ակտիվ էին «Պալմեյրասի» ֆուտբոլիստները: Սակայն անգլիացիները բավականին հմտորեն էին պաշտպանվում: Նրանց մի քանի անգամ էլ փրկեց թիմի ավստրալացի լեգեոնականը՝ դարպասապահ Մարկ Բոսնիչը: «Մանչեսթրը» հաճախակի դիմում էր սուր հակագրոհների: Դրանցից մեկի ժամանակ ֆիզ էր մնում հաշիվը կրկնապատկվեր, բայց Գիգսը շաս նպաստավոր դիրքից վրիպեց:

Միջմայրցամաքային գավաթի խաղարկությունների պատմության մեջ առաջին անգամ մրցանակը նվաճեց բրիտանական ակումբը: Խաղից հետո հաղթող թիմի ավագ մարզիչ Ալեխս Ֆերգյուսոնը նշեց, թե շաս կարեւոր է, որ հաջողությունը ձեռք է բերվել բրազիլացիների հետ պայքարում:

Ավելացնենք, որ արդեն մի քանի տարի անընդմեջ Հարավային Ամերիկա-Եվրոպա մրցակցությունում հաղթանակն ուղեկցում է եվրոպական ակումբներին: Այդուհանդերձ, ընդհանուր հաշիվը դեռեւս հարավամերիկացիների օգտին է՝ 20-18:

ԲՈՆՑՔԱՍՄԱՐՏ

Արթուր Գրիգորյանի նոր հաղթանակը

Պրոֆեսիոնալ բոնցֆամարտի WBO-ի վարկածով թեթեւ քաշում (60,2 կգ) աշխարհի բազմակի չեմպիոն, մեր հայրենակից Արթուր Գրիգորյանը հերթական հաղթանակը տարավ: Գերմանիայի Լյուբեկ քաղաքում կայացած 10 ռաունդանոց մենամարտում մրցելով ուրուգվայցի Վիլսոն Գալիի հետ՝ նա ամբողջ ընթացքում առավելություն ուներ, իսկ հանդիպման ավարտից 20 վայրկյան առաջ նոկաուտի ենթարկեց հակառակորդին: Սա Ուզբեկստանը ներկայացնող Գրիգորյանի 9-րդ հաղթանակն էր աշխարհի չեմպիոնի կոչման համար մենամարտում: Իսկ ընդհանուր առմամբ 31-ամյա բոնցֆամարտիկը 28 հանդիպում է անցկացրել պրոֆեսիոնալ ռինգում՝ շահելով բոլորը: Ընդ որում, դրանցից 18-ը նա ավարտել է նոկաուտով:

ՎՈԼԵՅԲՈԼ

Ռուսները մոտ են հաղթանակին

Ավարտին է մոտեցել Ճապոնիայում անցկացվող աշխարհի գավաթի խաղարկությունը տղամարդկանց հավաքականների միջեւ: Հիշեցնենք, որ պատվավոր մրցանակից բացի, մրցումների մասնակից 12 երկրների թիմերը բաք հետ պայքարում:

9-րդ տուրի մյուս հանդիպումներում հետեւյալ արդյունքները գրանցվեցին. Իտալիա-Ճապոնիա՝ 3-0, ԱՄՆ-Արգենտինա՝ 3-0, Բրազիլիա-Իսպանիա՝ 3-1, Կանադա-Թունիս՝ 3-0, Հարավային Կորեա-Չինաստան՝ 3-0: Այժմ, երբ մրցումների ավարտին 2 տուր է մնացել, Ռուսաստանի հավաքականը 17 միավոր է վաստակել, իսկ հաջորդ տեղերում են Կուբայի եւ Իտալիայի ընտրանիները՝ 16-ական միավորով:

Վիճարկում են նաեւ 2000 թ. Սիդնեյի օլիմպիական խաղերի երեք ուղեգրերը:

Առավել հաջող են հանդես գալիս Ռուսաստանի վոլեյբոլիստները: Նրանք անցկացված 9 խաղերից 8-ում հաղթել են եւ միայն 1-ում են պարտություն կրել: Վերջին հանդիպումը, որը շաս սկզբունքային էր, ռուսները շահեցին Կուբայի հավաքականից: Ընդ որում, հաղթանակը ձեռք բերվեց համեմատաբար դժվարությամբ՝ 3-2 հաշվով:

ԲԱԺԻՆԸ ՎԱՐՈՒՄ Է
ՌԱՇՄԻԿ ԱՎԱԳՅԱՆԸ

ԽԱՉԲԱՌ



Ուղղահայաց

1. Հայ կոմոզիտոր: 2. Ջարդաքար: 3. Բանակներով ծեծաղյա կամ փայտյա մատուցարան: 4. Ֆրանսիացի մոդելյոր: 5. Մարդ մոլորակի արբանյակը: 6. Ափյուռեահայ գրող, հասարակական գործիչ, խմբագիր: 9. Գեղ Հայաստանում: 13. Հայրենական մեծ պատերազմին մասնակցած հրածգային դիվիզիայի հայ հրամանատար, գեներալ-մայոր: 14. «Դոն Կիխոտի» հեղինակը: 16. Գյուղացու աշխատանքային երգերից: 17. Որեւէ գործի միջամտող, հաշտարար: 22. Տագնապի ազդանշան: 23. Վերդիի օպերաներից: 25. 17-րդ դ. Իտալիայում կազմավորված վոկալ կատարման ոճ: 28. Նոր տարի բաժի արեւմտահայերեն ձեւը: 29. Քաղաք Թուրքիայում: 30. Քաղաք Շվեյցարիայի հյուսիսում: 32. Թունավոր օձերի ընտանիք:

Հորիզոնական

7. Լեհ դերասան, որը մահացել է նկարահանումների հրապարակում: 8. Չայկովսկու օպերաներից: 10. Ազդող, ներգործող պատճառ, հանգամանք, խթան: 11. Իսրայելի կողմից պաղեստինյան գրավյալ տարածք: 12. Ֆրանսիացի դերասան Ֆեռնան Կոնտանդենի կեղծ անունը: 15. Շախմատային խաղասկիզբ: 18. Շիրվանզադեի «Նամուսի» հերոսներից: 19. «Չոյատա» վեպի հեղինակը: 20. Մայրաքաղաք Եվրոպայում: 21. Մակը: Ֆուր, անբիծ, չխաբարված: 24. Բելգիացի բանաստեղծ եւ դրամատուրգ: 26. Ջրածնի ատոմի միջուկը: 27. Սալինի ազգությունը: 31. Նախարարական տոհմ Հին Հայաստանում: 33. Շլդյանի կտավներից «Երկու ...»: 34. Ամերիկյան կինոակադեմիայի բարձրագույն մրցանակը: 35. Նեռելու փայտե զենք, որը հեռադարձ ոլորույթով վերադառնում է նետողի մոտ: 36. Ալ. Դյումային մեծ փաթ բերած վեպի հիման վրա գրված իտալական օպերան:

Կազմեց է. ԱՎԵՏԻՍՅԱՆԸ

Նախորդ համարում տպագրված խաչբառի պատասխանները

Ուղղահայաց 1. Պարանոց: 2. Կիզխոտ: 3. Կասկադ: 4. Մենաստեր: 7. Շոպեն: 8. Գոմեր: 10. Դելտա: 14. Ուղվական: 16. Արտաշես: 17. Գիտելի: 19. Բիոնիկա: 20. Աղյակի: 21. Ակիտա: 26. Ալանի: 27. Գավաթ: 29. Ինսուլին: 31. Ոսկակ: 33. Շարիկով: 34. Սմանոր: 35. Սկնդեղ

Հորիզոնական 5. Կաղիկ: 6. Ցագեր: 9. Խոտորուկ: 11. Գոռենկո: 12. Արտաշես: 13. Սերգել: 15. Տանգո: 18. Արքիտ: 22. Պատատուկ: 23. «Հանգա»: 24. Ինինս: 25. Կաբալոս: 28. Օլենին: 30. Ստոխ: 32. Օտական: 36. Սնտ սում: 37. Կերամաթ: 38. Ասմազուն: 39. Միլոն: 40. Շեփոր:

Ինպերմոթոր Արմենիա ՀՁ ՓԲԸ • Intermotor Armenia JV CJSC

M-class
Ճանապարհը Ձերն է
Own the Road

ԳՐԱՍԵՆՅԱԿ ԵՎ ԱՎՏՈՍՐԱՀ
Արամի 2, Երեւան 375010
Հայաստանի Հանրապետություն
Հեռ. (374-2) 52-80-85
(374-2) 58-12-75
Ֆաքս (374-2) 56-51-79
(374-2) 15-18-50
էլ.փոստ intmot@arminco.com

OFFICE & SHOWROOM
2 Arami St., Yerevan 375010
Republic of Armenia
Tel.: (374-2) 52-80-85
(374-2) 58-12-75
Fax: (374-2) 56-51-79
(374-2) 15-18-60
E-mail: intmot@arminco.com

Mercedes-Benz
Ավտոմոբիլի ապագան

digitised by A.R.A.R.@

ՀԱՍԱՐՈՍ

Դաշնային զորքերը շրջափակել են Արդունը

ՄՈՍԿՎԱ, 1 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Չեչնիայի Արդուն բնակավայրը (մոտավորապես 10 կիլոմետր Գրոզնիից դեպի արևելք) «շրջափակված է», «երկու-երեք օրվա ընթացքում» կվերցվի համերկրային ուժերի վերահսկողության ներքո: Այս մասին այսօր լրագրողներին հայտարարել է Ռուսաստանի պաշտպանության նախարար Իգոր Սերգեևը: «Ելույթների դրությունը վատանում է», ասել է նախարարը: «Դա մեր գործողության տրամաբանական ավարտն է»: Իգոր Սերգեևի խոսքերով, Չեչնիայում գործողությունը կավարտվի «առաջիկա մեկ, երկու, երեք ամսում»: Ինչպես հաղորդում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալությունը, Չեչնիայի Արդուն քաղաքի բնակիչների պատվիրակությունն այսօր դիմել է արևելյան խմբավորման համերկրային ուժերի հրամանատարությանը՝ քաղաքի գնդակոծումը դադարեցնելու խնդրանքով: Նրանք իրենց անվանում են «27-ի կոմիտե», այն շրջանների թվով, որ նրանք ներկայացնում են: Կոմիտեի ներկայացուցիչների խոսքերով, այսօր Արդուն քաղաքում զրոհայիններ չկան: Տեղի բնակիչների կողմից նրանք դուրս են մղվել քաղաքի սահմաններից եւ ներկայումս մերձակա անտառներում են:

Պարետային ժամ Սիեթլում

ՍԻԵԹԼ, 1 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ոստիկանությունը եւ ազգային գվարդիան հետեւում են պարետային ժամի պահպանմանը Սիեթլում, որտեղ երկուշաբթի զանգվածային բողոքների պատճառով, որոնք ուղեկցվել են անկարգություններով, խափանվել է Առեւտրի համաշխարհային կազմակերպության միջազգային համաժողովի բացումը: Ինչպես հաղորդում է BBC-ն, ցուցարարները թալանել են խանութները եւ հրկիզումներ սարքել, որից հետո Սիեթլի քաղաքապետը քաղաքում արտակարգ դրություն է հայտարարել: Ցուցարարների դեմ ոստիկանությունը արցունքաբեր գազ է կիրառել: Ձերբակալվել է առնվազն 20 մարդ: ԱՀԿ Սիեթլի համաժողովը պետք է մշակի համաշխարհային առեւտրի ազատականացման վերաբերյալ, այդ թվում եւ այնպիսի վիճելի հարցերի, ինչպիսին են սուբսիդիաները ֆերմերներին եւ աշխատանքի պայմանները, առաջիկա բանակցությունների օրակարգը: ԱՄՆ նախագահ Բիլ Քլինթոնը պատրաստվում է հանդիպել ցուցարարների հետ: Ըստ նրա, նպ մասամբ բաժանում է նրանց տագնապը զբաղվածության եւ շրջակա միջավայրի վրա ազատ առեւտրի բացասական ազդեցության առնչությամբ:

Բերեզովսկին 9 մլն դոլար է տրթել

ՄՈՍԿՎԱ, 1 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՍՆՆՐՔ: Հնարավոր է, որ առաջիկայում Բորիս Բերեզովսկուն առանձնակի խոշոր չափերի խարդախության մեղադրանք ներկայացվի, լրագրողներին հայտարարել է ՌԴ գլխավոր դատախազության առանձնակի կարեւոր գործերի քննիչ Նիկոլայ Վոլկովը: Խոսելով Շվեյցարիա կատարած իր այցելության մասին, Վոլկովն ընդգծել է, որ շվեյցարացի իր գործընկերների ցուցադրած բոլոր նյութերն իրեն համոզել են վերոհիշյալ գործի քննության ճիշտ ընթացքի մեջ: Վոլկովի խոսքերով, կարելի է առաջադրված համարել խարդախության գումարը՝ 9 մլն դոլարի չափով:

Սահմանադրական դատարանը հաստատեց Սկուրատովին պաշտոնազրկելու Ելցինի որոշումը

ՄՈՍԿՎԱ, 1 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: ՌԴ Սահմանադրական դատարանը հաստատել է նախագահ Բորիս Ելցինի որոշումը գլխավոր դատախազ Յուրի Սկուրատովին պաշտոնազրկելու վերաբերյալ, որը նախագահին մեղադրում է Կրեմլում կոռուպցիայի հետաքննությունը դադարեցնելու փորձ անելու մեջ: ՍԴ-ն որոշել է, որ նախագահը ճիշտ է վարվել նրան պաշտոնից ազատելով ուր ամիս առաջ, քանի որ Սկուրատովը գտնվում էր հետաքննության մեջ հանցավոր աշխարհի հետ կապերի կասկածանքով: Ի պաշտպանություն Սկուրատովի հանդես է եկել Դաշնության խորհուրդը, որը երեք անգամ, սկսած այս տարվա փետրվարից, հրաժարվում է հաստատել նախագահի որոշումը:

Ըստ Քլինթոնի, լրտեսությունից ավելի կարեւոր գործեր կան

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 1 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ԱՄՆ-ի նախագահ Բիլ Քլինթոնն այն կարծիքին է, որ լրտեսության հետ կապված նոր խայտառակությունը չպետք է ազդի Միացյալ Նահանգների եւ Ռուսաստանի համագործակցության վրա: «Մենք պետք է այդ գործն էլ հետաքննենք նույն կերպ, ինչպես որ անում էինք նախկինում, բայց չեմ կարծում, թե մենք պետք է դադարեցնենք միջուկային սպառազինությունների զգալի կրճատման կամ Ռուսաստանում կաշառատվության դեմ պայքարի նպատակով, կամ մեր խնդրո առարկա այլ հարցերում գործադրվող ջանքերը», հայտարարել է Բ. Քլինթոնը, այսօր Սպիտակ տանը պատասխանելով լրագրողների հարցերին: Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման, ամերիկյան վարչակազմի ղեկավարը հատկապես ընդգծել է միջուկային սպառնալիքը կրճատելու ուղղությամբ Ռուսաստանի հետ տարվող համատեղ աշխատանքի կարեւորությունը:

ԲԱՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ (ԲՀԻՕՀՀՄ)

ԲՀԻՕՀՀՄ-ն հայտարարում է մրցույթ միջազգային կոնֆերանս կազմակերպելու եւ անցկացնելու նպատակով: Կոնֆերանսը պետք է նվիրված լինի տեղեկատվական տեխնոլոգիայի եւ նրա ազդեցությանը հետեւյալ ոլորտների վրա:
- Շրջակա միջավայր եւ առողջապահություն
- Կրթություն եւ շարունակական ուսումնական ընթացք
- Էկոնոմիկայի զարգացում
- Մշակույթ եւ մշակութային առանձնահատկություններ

Կոնֆերանսը պետք է անցկացվի 2000 թ., Հայաստանում: Դիմումները (ռուսերեն կամ անգլերեն) պետք է ներկայացվեն եւ գրանցվեն ԲՀԻՕՀՀՄ-ի գրասենյակում մինչեւ ս. թ. դեկտեմբերի 15-ը:
Անհրաժեշտ տեղեկությունների եւ դիմումի ձեւի համար դիմել հետեւյալ հասցեով
Երեւան 19, Այգեձորի 53բ, հեռ/ֆաքս 272-119, 271-713, 271-719, 273-901, 151-088
www.osi.am E-mail: vahan@osi.am

USAID
AED
Academy for Educational Development

ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությունը (USAID) եւ Կրթական զարգացման ակադեմիան (AED) *տեղեկացնում են*

տնտեսական թեմաներով գրող լրագրողներին, որ «Անցման շրջանի տնտեսությունների հիմնախնդիրները» զեկուցումների շարքի հերթական հանդիպումը կկայանա **դեկտեմբերի 3-ին, ժամը 11:30-ին,** Թեֆեյան մշակութային կենտրոնում *(Խանջյան 50)*:

Հանդիպմանը կմասնակցեն ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ

Արմեն Մարտիրոսյանը

եւ «Աղավնի» ՍՊԸ գլխավոր տնօրեն

Արսեն Ղազարյանը:

Թեման՝ **«Տարածաշրջանային տնտեսական համագործակցության ներկա իրավիճակը եւ զարգացման միտումները»:**

ՀԱՅՆԵՐԱԲԱՆԿԸ
առաջարկում է...

փոքր ֆինանսական ծրագրերի կարճաժամկետ վարկավորում

- Գործող բիզնեսի ցանկացած ոլորտ
- Անհատ ձեռներեցների եւ իրավաբանական անձանց
- Շարժական սեփականության գրավադրմամբ
- Ազգային արժույթով

Վարկի առավելագույն չափը ◆ 1.500.000 դրամ
Վարկի առավելագույն ժամկետը ◆ 6 ամիս
Ամսական տոկոսադրույքը ◆ 3-4%

☎ 564-073

ԱՄԱՆՈՐՅԱ ՎԻԾԱԿԱՀՕԱՊ
ՀԱՅՆԵՐԱԲԱՆԿ

Մասնակցում են բոլոր ավանդատուները

3 Մրցանակ՝ մեկական «Տիգրան Մեծ» ոսկեդրամ

Դեկտեմբերի 1-ից 30-ը ավանդ ներդրողների համար կխաղարկվի լրացուցիչ ևս 12 մրցանակ՝ մեկական «Անահիտ» ոսկեդրամ

Ավանդների տոկոսադրույքները

Ժամկետը (օր)	ԱՄՆ դոլար (%)	ՀՀ դրամ (%)
20-ից 30	11.0%	18.0%
31-ից 91	16.0%	26.0%
92-ից 182	16.5%	28.0%
183-ից 273	17.5%	28.5%
274-ից 365	18.0%	30.0%

☎ 565-873

Ի լուր լրագրողների

Ուրբաթ օրը, դեկտեմբերի 3-ին, ժամը 11-ին, տեղի կունենա հանդիպում ԵՊՀ լրագրության ֆակուլտետի դեկան, բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Գառնիկ Անանյանի հետ:

Հանդիպումները կկայանան «Հոլսթեն» սրճարանում (Բուզանդի 1/3):

ՄԱՍ

ՀԵՌՈՒՏԱՍԱՏԵՐԱԳՐԵՐ

2 դեկտեմբեր

17.00, 21.00, 00.00 Հայլուր
17.20 Մուլտֆիլմեր «Պարծենկոտ մրջյունը», «Բարոն Մյունհաուզենի արկածները»
18.00 Հեռուստասերիալ «Սուրճ կնոջ բուրմունքով»
18.55 Խոշոր շահում
19.30 Հեռուստասերիալ «Կրքեր»
20.00 Բժիշկ եւ հիվանդություն
20.25 Արտակարգ ալիք
20.35 Տունտունիկ
21.40 Պրեմիերա
22.10 Բարի ակնքարք
21.50 «Կյանքի լավագույն կեսը». 20 տարի անց
23.30 Հիթ շերթ
00.20 Կենսագիտության ճեղքնքաց
01.20 Ուրիկոն+

09.00 Տոմար
ավարտին Կամ... կամ (կրկնություն)
19.00 Հրաղարակ
19.10 «Չղջիկը» ներկայացնում է. բնաբխարհ
19.30, 21.30, 23.30, 02.30 Սուրհանդակ
19.50 Մամուլի խոսնակ
20.05 Համերգ
20.30 Ատպարեզ
21.10 Չղջիկ
21.50 Գ/Ֆ «Սիա այսպիսի բլիթներ»
00.00 Անդորր
00.05 Երաժշտական դադար
00.15 «Կինո 2»-ը ներկայացնում է. Գ/Ֆ «Պանծալի աղազան»
01.55 ART VIDEO

Պրոմեթեւս
09.05 Վաղ առավոտյան
10.00, 18.20 Մուլտֆիլմ
10.10 Պույ-Պույ
10.35 «Կանանց աշխարհը»
11.35 Մոսկվան եւ ընկ.
12.00, 18.00, 20.30, 01.00 Լուրեր
18.45 Վ/Ս «Բնությանը պահապան»
19.10 «Ելակեռ»
19.30 Ռոմ-արտավ
19.55 «Սոլի բանալի»
21.00 Սերիալ «Հարավային ծովերի պատմությունը»
21.50 Զրույց-տոռ «Սենյակ»
22.35 Ուշ երեկոյան
23.25 Գ/Ֆ «Մորի Դիկ» (1-ին սերիա)

07.00, 09.00 Հեռուստաալիք «Բարի լույս»
08.40, 09.45, 23.00 Ընտրություններ 99
10.00, 16.00, 19.00, 01.35 Նորություններ
10.15, 18.00 Սերիալ «Քնքուշ թույն»
11.30-16.00 Բիզնես TV
16.20 Մուլտսերիալ
16.45 Սեզամ փողոց
17.15 «Յոթ փորձանք, մեկ պատասխան»
17.30 Մինչեւ 16 եւ ավելի...
19.25 Կալամբուր
20.00 «Գործընթաց»
20.45 է. Ռածինսկու հեղինակային ծրագիրը
21.45 Բարի գիշեր, երեխաներ
22.00 Ժամանակ
23.10 Գ/Ֆ «Օրենքով գողերը»
01.00 Քաղաքակրթություն
01.50 «Խաղաղ տան» գրադարանը
02.25 Գ/Ֆ «Սյուրտը փրկում է ընտանիքին»

07.30-10.20 Բարի լույս. Ռուսաստան
08.00, 09.00, 10.00, 14.00, 18.00, 20.00, 22.00, 02.00 Լուրեր
09.20, 02.20 Հերթապահ բաժանմունք
10.20 Հոմեոպատիա եւ առողջություն
10.30, 11.00, 13.50 Հեռուստահանդես «Արենա սպորտ»
11.10 Սերիալ «Գնչուհին»
12.00 Սերիալ «Մեր գաղտնիքի ամառը»
13.00 Ուրմաս Ossp... հետ
14.25 Հարյուրը մեկին
15.10 Սերիալ «Անտոնելա»
16.10 Սերիալ «Վայրի հրեշակը»
17.00, 03.25 Խանութ բազմոցի վրա
17.30 Մուլտֆիլմեր
18.25 Աշտարակ
18.55 Սերիալ «Կոմիսար Ռեքսը»
20.35 «Կլոր սեղան»
21.00 «Ժողովուրդն ուզում է իմանալ»
21.20 «Սպիտակ թուրք» ակումբ
22.50 Գ/Ֆ «Դելտա 3» ջոկատի օպերացիան» (ԱՄՆ)
00.40 Հեռուստահանդես «Թատրոն+TV»
02.30 Թեժ տասնյակ

ՍՓՅՈՒՌ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
հեռախոսով (590000), տեղեկագրքով (1800 դրամ), սկավառակով (3600 դրամ), INTERNET ցանցով (www.arminco.com/spyur; spyur.acc.am; armscape.com/spyur)

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արտակուեցոց 2 Գրանցման թիվ 65. Դասիչ 69150. Պատվեր 1163 Տպաքանակը 4000 Ստորագրված է տպագրության 1.12.1999 Գինը 100 դրամ

digitised by A.R.A.R.@